

ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԷՊՈՍԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԵՏԻՍՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ*

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կրոնաժխական երգերը, որոնց թվում են նաև «Ավետիսները»՝ Ծննդյան երգերը:

Ըստ մեղեդային կառուցվածքի՝ ավետիսները կարելի է բաժանել երկու խմբի.

ա) քրիստոնեական ժամանակաշրջանում եկեղեցական երաժշտությունից գեղջկականի մեջ թափանցած մեղեդիներ,

բ) նախաքրիստոնեական ժամանակաշրջանից հասած ժողովրդական մեղեդիներ:

Ինչպես մեզ, այնպես էլ ժամանակին Կոմիտասին հետաքրքրել է «գեղջկական երգի անխառը ոճով» ավետիսների երկրորդ խումբը, որը կապված է ժողովրդական երգաստեղծության առավել հին՝ արխաիկ շերտերի հետ:

Ներկա ուսումնասիրության համար առավել հետաքրքրական են ժողովրդական ավետիսների միջին՝ կենտրոնական մասերը՝ խնկի ծառը բերելը և տաճարի կառուցման հատվածները, որոնք ավետիսների առավել հին շերտն են կազմում և տանում են մեզ դեպի Հին Շումեր՝ մարդկության առաջին գրավոր սեպագիր հուշարձանները (մ.թ.ա. III հազարամյակ), դեպի Գիլգամեշի մասին էպոսը և «Էն-Մերքարն ու Արատտայի գերագույն քուրմը» էպիկական պոեմը:

Մեր վերլուծական աշխատանքների արդյունքում մի շարք անվիճելի փաստարկներ են առաջ գալիս՝ ապացուցելու այն, որ շումերական էպիկական ավանդազրույցները ոչ թե փոխառնման սկզբունքով են թափանցել հայկական ժողովրդական ավետիսների մեջ և հետագայում «վերածվել» Քրիստոսի Ծննդյան երգերի, այլ այդ զրույցներն ի սկզբանե **էնդեմիկ ծագում են ունեցել** և ժողովրդական բանավոր գրականության մեջ արդեն իսկ ճանաչված ու սիրված են եղել:

Բանալի բառեր – Կոմիտաս, Ծննդյան երգեր, ժողովրդական ավետիսներ, խնկի ծառ, Կենաց ծառ՝ մայրի, Ուրուկ և Ուրֆա-Եդեսիա քաղաքներ, Եփրատ, Գիլգամեշ և Էնկիդու, Արատտա և Շումեր, լաջվարդ, Արարատ և Մասիս, Հայոց աշխարհ և Միջագետք, Էն-Մարքար և Էնսուիքեշդաննա տիրակալներ:

Ժողովրդական երգաստեղծության առավել հին շերտն են կազմում ծխական երգերը, ուստի մեծ արժեք ու հետաքրքրություն են ներկայացնում ուսումնասիրողների համար: Ծխական երգերի շարքում են դասվում նաև «Ավետիս»-ները, կամ ինչպես անվանում են՝ «Ծննդյան երգեր»-ը: «Աւետ»՝ «ուրախ լուր», «բարի լուր» արմատից են սերված «ավետիս», «ավետարան» բառերը¹: Մասնագետները զուգահեռներ են անցկացնում նաև «հավատ», «հավետ», «հավերժ» բառերի հետ՝ նկատի ունենալով «հաւ»՝ բնիկ հայկական արմատի բացառիկ նշանակությունը²:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, tigranyan.marianna@mail.ru, հոդվածի ընդունման օրը՝ 11.02.2019, գրախոսման օրը՝ 28.03.2019:

¹ Ցեղակից են սանսկրիտի **vidati** «խոսի», հին պարսկերենի **a-void-ya** «ծանուցում», իրաներենի **awyatti-awyata** «հիշողություն, հիշատակ», **Avesta** «հավատք» ևն բառերը (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), Երևան, 1971, հ. 1, էջ 358-359):

² Հայոց լեզվում այդ հնագույն արմատը բազմակի նշանակություն ունի. հաւ՝

Ավետիսներ երգել են Սուրբ Ծննդյան տոնի նախորդող երեկոյան, հիմնականում տղա երեխաները³ տնետուն շրջելով, գովելով և օրհնելով ընտանիքի անդամներին: Գյուղի յուրաքանչյուր տան դռան կամ երդիկի առաջ խմբվելով՝ երիտասարդներն ավետիս կանչելը սկսում էին Քրիստոսի ծննդյան փառաբանումով: Որպես կանոն երգողները ճշտում էին տվյալ ընտանիքի ամենափոքրիկ ժառանգի անունը, ապա գովերգում և լավագույն ցանկություններ մաղթում նրան: Երգողները պարգևատրվում էին աչքալուսանքով. տան տիկինը մատուցում էր նրանց չոր մրգեր, քաղցրավենիք և սննդամթերք:

Որոշ շրջաններում Սուրբ Ծնունդն ավետող երգերը կոչվել են Կաղանդներ՝ «Կալանդոս, Գալանտոս»⁴. անվան ծագումնաբանությունն անշուշտ կապվում է լատիներեն *calendae*՝ «օրացույց» բառի հետ⁵:

Կոմիտասն իր «Հայոց եկեղեցական եղանակները» հոդվածում գրում է. «Ավետիսների նիւթն առնուած է Ս. Աւետարանից՝ հրեշտակների հովիւներին Մանուկ Յիսուսի ծնունդն աւետելու րոպէն»⁶: Կոմիտասի ավետիսների սահմանումը բխում է եկեղեցական ավետիսների մասին եղած պատկերացումներից, սակայն նույն տեղում վարդապետը նշում է, որ մինչև մեսրոպյան գրերի գյուտը, սաղմոսերգությունը, ինչպես և եկեղեցական հին եղանակների կարգավորությունը կատարվել է ժողովրդական հին եղանակներով⁷: Որպես օրինակ Կոմիտասը բերում է Ռշտունյաց⁸ Պողոնիս⁹ գյուղի Ավետիսը, որը նա ձայնագրել էր Գևորգ վարդապետի եղբայր, նույն գյուղի բնակիչ Հարությունից:

«պապ, հօր հայրը, նախնիք, նախահայր», «ծայր, սկիզբ, սկզբնաւորութիւն», «թոշուն, հաւք» (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, Երևան, 1977, հ. 3, էջ 65-67):

³ Որոշ շրջաններում ավետիսներ կանչել են նաև աղջիկ երեխաները: Վկայություններ կան մեծահասակների, նորահարսների, ինչպես և հոգևորականների՝ ավետիս ասելու մասին (տե՛ս **Քաջբերունի**, Տօներ // «Ազգագրական Հանդէս» (այսուհետ՝ ԱՀ), Թիֆլիս, 1901, գ. VII-VIII, էջ 114):

⁴ Տե՛ս **Շահազիզ Եր.**, Նոր Նախիջեւանը և նոր նախիջեւանցիք // ԱՀ, Թիֆլիս, 1902, գ. IX, էջ 5-9:

⁵ Հայկական ժողովրդական ավետիսների հետ զուգահեռներ կարելի է գտնել սլավոնացիների և եվրոպացիների մշակույթում. *ռուս* – коляда, *ռումին*. – colida, *չեխ*. – uioi. – koleda, *լեհ*. – kolęda, *սերբ*. – kolenda, *ալբ*. – kolëndë, *բուլղ*. – колада, *ֆրանս*. – charandes ևն:

⁶ Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1894, N 7 (է յուլիս), էջ 222-223:

⁷ Նույն տեղում, էջ 224:

⁸ Ռշտունիք՝ գավառ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, որն ընդգրկում էր Վանա լճի առափնյա շրջանները, ինչպես նաև Աղթամար կղզին: Անվան ծագումը կապում են Ուրաշտու (Ուրարտու) և Ռիշուանի երկրանունների հետ, որոնք հիշատակված են ասորեստանյան, ուրարտական սեպագիր արձանագրություններում (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇԲ), Երևան, 1998, հ. 4, էջ 447):

⁹ Բողոնիս [Բողանիս], Պողոնիս՝ գյուղ Արմ. Հայաստանում, Վանի Գավառ գավառակում: Եղել է գրչության կենտրոն:

ԱՐԴ ԳՆԾԱԳԵՔ¹⁰ (Ռշտունիք, գ. Պողոնիս)



Արդ ցնծացեք, ուրախացեք, Յալելյու,
Այսօր ծնունդք ի Մարիամա, Յալելյու:
Մարիամ գնաց դուռն ի հետին,

Քամակ ետու խաչափետին,
Շնչեց, եբի Հիսուս որդին:
Հիսուս որդին մկրտեցին,
Բուրդ խանձարուր փաթըթեցին:
Էրնեկ ա քեզ, սուրբ Հովհաննես,
Քեզ Քրիստոսին քավոր արին:
Էրնեկ ա քեզ, գետ Հորդանես,
Քրիստոս մեջ քեզ մկրտեցին:
Էրնեկ ա քեզ, բուրդ խանձարուր,
Քրիստոս մեջ քեզ փաթըթեցին:

Էս տան շինած աշնան շինած,
Էս տան քարեր մարմար բերած,
Թոներ ինի (մեջ) քընձ (քանց)
հ'եկեղցի,
Հարսներ ինի քընձ եղվնիք.
Ավելը ձեռ' փունջ մանուշակ,
Կտխեն (բաժակ) զձեռ' նռան գինին:
Մամիկ, մամիկ, ես քե ծառա,
Սուրբ ոտներդ/ կճովոռա,
Կոքեով (ընկույզ) էբի' կխոխոռա.
Ձեր տղի անուն ինչ ի. (Ներսես).
Ներսես նստի ծառի տակին,
Բրչամ (ծամ) թալե ծառի ճղին,
Քանի ծառինճող կա,
Ձեր Ներսեսին շատ արև կա:

Կարծում ենք, որ այս օրինակը Կոմիտասի առաջին «Ավետիս»-ի գրառումն է (Վաղարշապատ, 1890-ականների սկիզբ): Այս, ինչպես և հաջորդ երկու Ավետիսների¹¹ մեղեդիները ժողովրդականի մեջ թափանցել են եկեղեցական երաժշտությունից¹²:

Կոմիտասը նշում է. «Այժմ ևս կան անթիւ, անհամար Աւետիսներ, որոնք զանազան տեղեր, այլ կերպ և այլ եղանակներով են երգվում, բայց ընդհանրապէս խօսքերի բովանդակութիւնը միևնոյն է, զանազանութիւնը բարբառի մէջ է...»¹³:

Ավելացնենք նաև **մեղեդիների զանազանությունը**, քանզի ինքը՝ Կոմիտասը, առանձնակի արժևորել է գեղջկական երգի անխառն ոճով ավետիսների մեղեդիները: Ժողովրդական ավետիսի ավանդական օրինակ է կոմիտասյան մեկ այլ գրառում.

¹⁰ Կոմիտաս, Երկերի ժողովածու (այսուհետ՝ ԵԺ), Երևան, 2000, հ. 10, N 20, էջ 54:

¹¹ Երեք օրինակն էլ վերնագրված են՝ «Արդ ցնծացեք» (տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 20, 21, 22):

¹² Ընդհանուր առմամբ Կոմիտասը գրառել է թվով 8 ավետիս (տե՛ս աղյուսակները):

¹³ «Արարատ», էջ 224:

ՄԱՅՐԱՄ ԳՆԱՑ¹⁴ (Մոկք, գ. Գինեկանց)



Այս «Ավետիսը» Կոմիտասը ծայնագրել է Մոկքի¹⁵ Գինեկանց գյուղի¹⁶ բնակիչ Նահապետ Աբրահամյանից՝ Նախո Քեռուց¹⁷:

Ժողովրդական ավետիսները, ըստ մեղեդային կառուցվածքի, կարելի է բաժանել երկու խմբի.

ա) **քրիստոնեության ժամանակաշրջանում եկեղեցական երաժշտությանից գեղջկականի մեջ թափանցած մեղեդիներ** (տե՛ս աղյուսակ I),

բ) **նախաքրիստոնեական ժամանակաշրջանից մեզ հասած ծիսական ժողովրդական մեղեդիներ** (տե՛ս աղյուսակ II):

Ներկա ուսումնասիրության համար առավել հետաքրքրական են երկրորդ խմբին պատկանող «Ծննդյան երգերը»: Պետք է նշել, որ այդ ժանրի բնորոշման փորձեր արվել են դեռևս XIX դարում: Ավետիսների խիստ **ար-խաիկ** բնույթի մասին նշում է Գարեգին վարդ. Հովսեփյանը և քրիստոնեության բովանդակային համակարգին կցվելն ավելի ուշ երևույթ համարում: Նա առաջինն էր, որ համեմատեց, ապա և մատնանշեց ժողովրդական և տաղարանների ավետիսների առանձնահատկությունները¹⁸:

Ասատուր Մնացականյանը ավետիսների բանաստեղծական տեքս-

¹⁴ Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 23, էջ 55:

¹⁵ Մոկք [Մոկս] աշխարհ՝ երկրամաս Մեծ Հայքում, սահմանակից էր Վասպուրականին, Աղձնիքին և Կորճայքին: Մ.թ.ա. IX դ. Մոկքը մտել է Վանի թագավորության մեջ: Անվան ծագումը մի դեպքում կապում են հնագույն **մոսկ**, **մուշկ** ցեղանվան, մյուս դեպքում՝ **մոգ** (կրոնավոր իմաստով) բառերի հետ (տե՛ս ՀՀՇՏԲ, Երևան, 1991, հ. 3, էջ 863):

¹⁶ Գինեկանց [Գինեկանց]՝ գյուղ Արմ. Հայաստանում, Վանի նահանգի Մոկսի գավառում: Գյուղում գտնվել է համանուն վանք, որն ունեցել է երկու եկեղեցի՝ Ս. Նշան և Ս. Գևորգ: Եղել է գրչության կենտրոն: Գյուղի անունը կապվում է Ս. Գայանե (Ժող. Գինե) կույսի հետ (տե՛ս **Բաղայան Գ.**, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրերին // «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2015, հուլիս – սեպտեմբեր, թիվ 3, էջ XI):

¹⁷ Նախո Քեռի՝ Նահապետ Աբրահամյան [մոտ 1851, գ. Գինեկանց – 1916-1920, Վաղարշապատ], էջմիածնի Գևորգյան ճեմարանի դռնապանն էր, որից 1886 թ. Մանուկ Աբեղյանը գրի առավ «Դավիթ և Միեր» պատումը: Նախո Քեռու ժողովրդական վեպի երգած չափածո հատվածները գրառել է Կոմիտասը (Ով ով է: Հայեր. Հանրագիտարան, Երևան, 2007, հ. 2, էջ 204):

¹⁸ **Գ. վրդ. Յովսեփյան**, Ժողովրդական բանահիստության հետքեր միջնադարեան տաղարաններից // «Արարատ», Վաղարշապատ, 1898, էջ 544:

տերն ուսումնասիրելիս հիշատակում է Աստվածատուր Հենեցուն¹⁹ հիմք ընդունելով Մատենադարանի՝ 1556 թ. արտագրված N 8968 ձեռագիրը²⁰, որում գրառված է տաղի հնագույն օրինակը²¹: Հեղինակը նաև նշում է հնագույն ժամանակներից պահպանված վկայություններն առ այն, որ ավետիսներում «իշխում է հին հոգին»²²: Ա. Մնացականյանի ժողովրդական երգերի բանաստեղծական լեզվի վերաբերյալ վերլուծությունները չափազանց արժեքավոր են: Հեղինակը նշում է, որ տարբեր դարերում գրառված ավետիսներն իրենց տարբերակներով ընդհանուր առմամբ **համաժողովրդական լեզվով են երգվել**: Նույնիսկ այն ավետիսներում, որ մշակվել են հոգևորականության կողմից, որտեղ դիտվում է երգի բովանդակության որոշ հեղաշրջում, միևնույնն է, լեզուն մնացել է համարյա անփոփոխ: Բացատրությունը հետևյալն է. «...եթե հոգևորականները փորձեին խախտել լեզուն, ապա պիտի խախտեին և՛ տաղաչափությունը, և՛ հանգավորումը, և՛ ընդհանրապես տվյալ երգի այն ամբողջ գրավչությունը, որից հենց ցանկանում էին օգտվել: Ուստի այդ երգերի համաժողովրդական լեզուն ավելի օգտակար էր նրանց համար, քան գրաբարը»²³:

Մեծ արժեք է ներկայացնում Մանուկ Մանուկյանի ուսումնասիրությունը: Նա ավետիսները բնութագրում է որպես. «... ժողովրդի մեջ երգվող նոր տարվա նախաքրիստոնեական ավետման երգեր...»²⁴:

Աշոտ Պատմագրյանը ժողովրդական ավետիսները դասում է ոչ թե **ծիսական**²⁵, այլ **պաշտամունքային** ժանրին և դիտարկում որպես **տոմարային** երգեր, հեղինակի ձևակերպմամբ՝ «ֆոլկլորի երգեր»²⁶:

Արուսյակ Սահակյանը «Թալին» ժողովածուում զետեղված խիստ արժեքավոր ավետիսների երկու օրինակների ծանոթագրություններում գրում է.

¹⁹ Աստվածատուր Հենեցուն են ընծայում «Այսօր տոն է Ծննդեան» տաղը, որը միջնադարյան տաղերգության սքանչելի նմուշներից է: Ըստ Հակոբ Անասյանի՝ «նա եղել է Չորրորդ Հայոց Հայնի կամ Հենի ավանից» (տե՛ս **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., Երևան, 1976, հ. Բ, էջ 685):

²⁰ Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում այդ մշակմանը կարելի է հանդիպել նաև N 3386, 695, 1677, 8540, 7694, 4335, 1990, 7704, 7315, 2002, 6987, 3540, 8274, 8682, 2339, 2079, 8219, 8294, 8376, 8611, 5394, 3229, 9077 և այլ ձեռագրերում (տե՛ս **Մնացականյան Ա.**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 590):

²¹ Ենթադրվում է, որ հեղինակը (Հենեցին) ապրել է XVI դ. առաջին կեսին (տե՛ս նաև՝ **Մուշեղյան Ա.**, Հայոց պատարագի տաղերն ու մեղեդիները // «Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը», Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, Երևան, 2016, էջ 305):

²² **Մնացականյան Ա.**, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 563:

²³ **Մնացականյան Ա.**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 103:

²⁴ **Մանուկյան Մ.**, Ժողովրդական ավետիսների մեղեդիները, Էջմիածին, 1995, էջ 19-20:

Ավետիսներ գրառելու նպատակով Մ. Մանուկյանը կազմակերպել է նպատակային գիտարշավներ (տե՛ս նաև Մարտունու շրջանի ժողովրդական երգեր, կազմ.՝ Մ. Մանուկյան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, 1997):

²⁵ Պատմագրյանը ծիսական է համարում միայն ողբերն ու հարսանեկան երգերը:

²⁶ **Պատմագրեան Ա.**, Հայ երգը դարերի միջից, Պեյրոյթ, 1977, էջ 41:

«...ժողովրդական ավետիսներն իրենց նստվածքներով առավել հին են ու վաղնջական, քան եկեղեցական ծննդյան մեղեդիները»²⁷:

Ուշագրավ է Միհրան Թումաճանի ձևակերպումը. «Ավետիսների շարքը առավելապես կապված է հին ավանդական սովորություններին: Կյանքի սկզբնավորության խորագրի հետ կապված տոներ կատարվել են թե հեթանոսական և թե քրիստոնեական զանազան ծեսերով: Մասնավորապես Կաղանդի, Նոր տարվա, ավանդության դարավոր հետքերը կրող այս ավետիսները շաղկապված են նաև «Կենաց ծառի» խորերգին, որ հեթանոսական և քրիստոնեական ծեսերի մեջ ի հայտ է գալիս Վահագնի կամ Քրիստոսի ծննդյան միստիկ պատկերացումով: Ժողովրդական հոգեբանությունը Կենաց ծառի ամենապարզ հասկացությամբ պատկերացրել է հարսի ու փեսայի ծաղկելն ու մանկան ծնվելը»²⁸:

ԾԱՌ ՄԻ ԿԱՆՉԵՐ²⁹



Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լիլիթ Սիմոնյանի՝ ավետիսներին նվիրված ուսումնասիրությունը. հեղինակը, հնարավորինս մեկտեղելով մինչ օրս հրապարակված (ինչպես և անտիպ) ավետիսների շուրջ 8 տասնյակի հասնող օրինակների հիման վրա մանրակրկիտ վերլուծական աշխատանք է արել: Ավետիսների ընդհանուր բնութագրումից, ժանրի պայմանական դիտարկումից բացի, Լ. Սիմոնյանը քննության է առել ժանրի ծագման և զարգացման հարցերը, տվել բանաստեղծական տեքստերի և տիպական մեղեդիների վանկաչափական ու տաղաչափական սահմանումները³⁰:

Ավետիսների սքանչելի օրինակներ կարելի է գտնել ինչպես միջնադարյան ձեռագիր մատյաններում³¹, այնպես էլ ազգագրական ժողովածուներում³²: Ծիսական և տոնական երգերը, ժողովրդական երգաստեղծության

²⁷ «Թալին» Հայկական ժողովրդական երգեր և նվագներ, կազմ.՝ Ա. Փահլևանյան, Ա. Սահակյան, Երևան, 1984, էջ 30:

²⁸ **Թումաճան Մ.**, Հայրենի երգ ու բան (այսուհետ՝ ՀԵՈԲ), «Ծառ մի կանչեր» («Ծառ է կանչել») երգի ծանոթագրությունը, Երևան, 1972, հ. 1, N 19, էջ 206:

²⁹ Նույն տեղում, էջ 65:

³⁰ **Սիմոնյան Լ.**, Տոմարային ծիսաշար. Նոր տարի և Սուրբ Ծնունդ, Երևան, 2006, հ. 1, էջ 104-288:

³¹ Տե՛ս N 16 տողատակը:

³² Ժողովրդական ավետիսների բանաստեղծական տեքստերի հնարավորինս ամբողջական տարբերակները տե՛ս. **Ա. Վրդ. Սեդրակեան**, Քնար մշեցոց եւ վանեցոց,

առավել հին շերտերը կազմելով, չեն կարող սահմանափակվել միայն քրիստոնեության ժամանակաշրջանով: Ավետիսներում խտացվել են հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում ձևավորված ծիսական կարգերը և հազարամյակների խորքից եկած հնագույն տոները, որոնք պահպանվել են ոչ միայն հայերի, այլ նաև Հին Արևելքի ուրիշ ժողովուրդների կրոնական գրույցներում:

Ժողովրդական ավետիսների կառուցվածքին և բովանդակության խընդրին անդրադառնալով՝ Մ. Մանուկյանը պարզել է, որ ավանդական տեքստն ունի բազմամաս կառուցվածք³³: Մեզ հասած ավետիսների հնարավորինս ամբողջական օրինակներում կարելի է սահմանագծել չորս հատված, որոնք, ըստ էության, միմյանց հետ բովանդակային կապ չունեն.

ա) Մարիամի Աստվածածին որդու ծննդաբերությունը,

բ) Խնկի ծառի հետևից գնալու, ծառը կտրելու և բերելու նկարագրությունը,

գ) սրբազան տաճարի կառուցումը,

դ) տան փոքրիկին օրհնելը և փայ-բաժին ուզելը:

Ներկա ուսումնասիրության համար առավել հետաքրքրական են միջին՝ կենտրոնական մասերը՝ Խնկի ծառի բերելը և տաճարի կառուցման հատվածները, որոնք ավետիսների առավել հին շերտն են կազմում և տանում են մեզ դեպի Հին Շումեր՝ մարդկության առաջին գրավոր սեպագիր հուշարձանները (մ.թ.ա. III հազարամյակ)՝ դեպի Գիլգամեշի մասին էպոսը և «Էն-Մերքարն ու Արատտայի գերագույն քուրմը» էպիկական պոեմը³⁴:

Գիլգամեշի մասին դյուցազնավեպը պահպանվել և մեզ է հասել աշխարհի հնագույն չորս լեզուներով՝ շումերերեն (սումերերեն), աքքադերեն (ասուր-բաբելերեն), խեթերեն (հիթիթերեն) և խուրերեն (խուդիերեն)³⁵: Այս

Վաղարշապատ, 1874, էջ 5-6: **Շերենց Գ.**, Վանայ սագ, Թիֆլիս, 1885, էջ 79-80: **Գ. սրկ. Յոլսեփեանց**, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից (Մոկս), Թիֆլիս, 1892, էջ 23-24: **Գրիգոր ք. Նժդեհեանց**, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. V, էջ 188-189: **Լալայան Եր.**, Բորչալուի գաւառ // ԱՀ, Թիֆլիս, 1903, գ. X, էջ 253-255: Ավելի քան 80 ավետիսների բանաստեղծական տեքստերը մեկտեղված են Լ. Սիմոնյանի վերը նշված գրքում (տե՛ս Տոմարային ծիսաշար, հ. 1, էջ 243-288):

³³ **Մանուկյան Մ.**, Ժողովրդական ավետիսների մեղեդիները, Էջմիածին, 1995, էջ 29:

³⁴ Գիլգամեշը Ուրուկ քաղաքի տիրակալն էր (մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.) և ըստ մեզ հասած տվյալների՝ կառավարել է շուրջ 2600! տարի: Գիլգամեշի մասին հերոսական էպոսն առ այսօր Հին աշխարհի պահպանված ամենահին գրական ստեղծագործությունն է, սեպագրերով գրված ամենամեծ երկը՝ Հին Արևելքի գրականության խոշորագույն կոթողներից մեկը: Առաջին անգամ հայտնաբերվել է XIX դ. կեսերին Նինվեում՝ Աշուրբանիպալի գրադարանում կատարված պեղումների ժամանակ: Այն գրված է 12 վեցասյուն կավե պնակիտների վրա մանր սեպագրերով և ներառում է շուրջ 3000 տող (տե՛ս **Крамер С.** Шумеры. Первая цивилизация на Земле. Пер. с англ. А. Милосердовой. Москва, 2002):

³⁵ XX դ. սկզբներին՝ խեթական մայրաքաղաք Խաթթուշաշի (Խատտուսա) պեղումների ժամանակ, թագավորական դիվանում գերմանացի հնագետներ Հ. Վինկ-

առումով Նշան Մարտիրոսյանը³⁶ հավանական է համարել, որ էպոսը թարգմանված լինել փոքրասիական այլ լեզուներով՝ լուվիերեն, պալայերեն, ինչպես և խայերեն (Խայասան բնակեցնող մեր նախնյաց՝ հայազիների լեզուն):

Գիլգամեշի, Էնկիդուի և հսկա Խումբաբայի (Հումբաբա, Հովվավա) մասին գրույցները սիրված և տարածված են եղել Մերձավոր Արևելքի այլալեզու և այլացեղ ժողովուրդների բանավոր գրույցներում, որոնք երկրներկիր, սերնդեսերունդ բերանացի սովորությամբ փոխանցել են դարերի խորքից հասած դյուցազնավեպերը: Ինչպես ցանկացած էպոսում, այնպես էլ Գիլգամեշի մասին էպիկական ասքում, պատմական իրադարձություններն ու կրոնական պատկերացումները միախառնվելով վերածվել են դիցաբանական գրույցների:

Իրավացի է Պիտեր Յենսենը, երբ գրում է. «Գիլգամեշ դյուցազներգությունը բաբելացիների համար նույնն է, ինչ Աստվածաշունչը մեզ համար»³⁷:

Շումերական էպոսից մեզ հետաքրքրող հատվածը «Գիլգամեշը և Ողջերի երկիրը» երգն է, որը հայտնի է նաև «Անմահների լեռը»³⁸ անվանումով (պնակիտներ III, IV, V): Էպոսի հերոսներ Գիլգամեշը և Էնկիդուն³⁹, յոթ սար անցնելով, հասնում են Ողջերի երկիր՝ Անմահների լեռը, որտեղ, ավանդության համաձայն, աճում էին մայրիները: Գիլգամեշի և Էնկիդուի մուտքը մայրենիների անտառ հետևյալ կերպ է նկարագրված էպոսում. «Այնտեղ կեցած, հանդարտորեն կը նայեին: Կը զմայլեին մայրիներու բարձրությամբ: Նաև անտառին մուտքը իրենց զարմանք կը պատճառեր: Կը տեսնեին մայրիներու լեռը, աստվածներուն բնակավայրը, <...> նվիրական սուրբ տաճա-

լերն ու Օ. Պոլստայնը հայտնաբերեցին էպոսի խեթերեն և խուրերեն խմբագրված տարբերակները:

³⁶ Ն. Մարտիրոսյանին է պատկանում խեթերենի և հայերենի մի շարք ընդհանրությունների հայտնաբերումը (տե՛ս **Մարտիրոսյան Ն.**, Հայերենի հարաբերությունը հեթերենի հետ // «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1924, N 9-10, էջ 413, 1926, N 7-8, էջ 369): Նա առաջինն է, որ կարողացել է որոշել խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվող մի շարք ցեղային միավորումների և երկրների անվանումները, ինչպես և տեղադրել դրանք Հայկական լեռնաշխարհում (տե՛ս **Բարսեղյան Լ.**, Նշան Մարտիրոսյան // «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, N 1, էջ 301-302):

³⁷ Ականավոր արևելագետ Պ. Յենսենը (գերմ.՝ Herbert Bitner), ասորաբաբելական կրոնական գրականությունն ուսումնասիրելով, զուգահեռներ է անցկացրել հոմերոսյան հին հունական, եբրայական առասպելների, այդ թվում՝ Աստվածաշնչի հետ (տե՛ս «Գիլգամեշն ու համաշխարհային գրականությունը», գերմ.՝ **Jensen P.** Gilgamesch – epos in der Weltliteratur // “Deutsche Literaturzeitung”, Strasbourg, 1906, S. 901-911):

³⁸ Շումերերենում «երկիրը» և «լեռը» նույնիմաստ բառեր են:

³⁹ Գիլգամեշի անպատիժ գործողությունների ու բռնակալության դեմ պայքարելու նպատակով աստվածները կավից ստեղծում են Էնկիդուին: Քաղաքակրթությունից հեռու, վայրի գազանների միջավայրում մեծացած Էնկիդուին վիճակված էր դառնալ Գիլգամեշի մտերիմ ընկերը (տե՛ս **Афанасьева В.** Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве. Москва, 1979, стр. 110-111):

րը: Լեռան փեշերուն վրա կը բարձրանային հաստաբուն մայրենիները, որոնց շուրջ բերկրանքով ու զովությամբ լեցուն էր»⁴⁰:

Մայրիները կտրելու և բերելու նպատակը աստվածների աչքում բարձրանալը, փառք ու անմահություն ձեռք բերելն էր: Գտնելով իրենց «սրտի մայրիները»՝ հերոսները մենամարտում են սրբազան մայրիների պահապան Խումբաբայի (Հուվավա)⁴¹ հետ: Գիլգամեշին ու Էնկիդուն սատարելու եկած 50 փահլևանների օգնությամբ հսկա մայրիներն իջեցնում են սարից, ապա Եփրատով լուղարկում դեպի Ուրուկ⁴²:

Как услышал Гильгамеш слово Энкиду,
Боевой топор он поднял рукою,
Выхватил из-за пояса меч свой, –
Гильгамеш поразил его (Хумбабу) в затылок,
Его друг, Энкиду, его в грудь ударил;
На третьем ударе пал он,
Замерли его буйные члены,
Сразили они наземь стража Хумбабу,
На два поприща вокруг застонали кедры.
Сразил Энкиду стража леса,
Чье слово чтили Ливан и Сариа,
Покой объят высокие горы,
Покой объят лесистые вершины.
Он сразил защитников кедра –
Разбитые лучи Хумбабы.
Когда их всех семерых убил он,
Боевую сеть и кинжал в семь талантов⁴³,
Груз в восемь талантов, – снял с его

Մարտական կացինը բարձրացրեց ձեռքով,
Դուրս հանեց գոտուց իր սուրը,
Գիլգամեշը խոցեց նրա ծոծրակը,
Նրա ընկեր Էնկիդուն կրծքին հարվածեց.
Երրորդ հարվածի վրա ընկավ նա,
....
Գետնին տապալեցին պահապանին,
Խումբաբային,
Երկու ասպարեզ⁴⁵ շառավիղով մայրիները տնքացին.
Նրա հետ միասին Էնկիդուն անտառներն ու մայրիները սպանեց:
....
Էնկիդուն բարբառում է նրան, Գիլգամեշին.
«Եղբայր իմ, Գիլգամեշ: Մենք տապալեցինք մայրիները:
Մարտական կացինը գոտուցդ կախիր,
Շամաշի առաջ հեղում կատարիր,
Եփրատի ափը տանենք մայրիները»⁴⁶:

⁴⁰ Տե՛ս **Մարտիրոսյան Ն.**, Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ, շում. թարգմ.՝ Ն. Մարտիրոսյանի, Երևան, 1963, էջ 49:

⁴¹ Հումբաբա (Խումբաբա, Հուվավա)՝ շումերա-աքքադական դիցաբանության մեջ հսկա հրեշ, մայրիների անտառի պահապան: Մասնագետների կարծիքով Հումբաբա հսկայի անունը շատ ավելի հին է, քան ինքը՝ պատմական Գիլգամեշը (տե՛ս История Древнего Востока. Месопотамия. Под ред. И. Дьяконова. Москва, 1983, стр. 306).

⁴² Տե՛ս **Крамер С.** История начинается в Шумере. Под ред. и с пред. В. Струве, перев. с англ. Ф. Мендельсона. Москва, 1965, стр. 209-210.

⁴³ Талант, տաղանդ՝ չափի միավոր, ≈ 30 կգ:

⁴⁵ Հայերեն [հուն.՝ stadion] հեռավորության չափը սահմանվել է Բաբելոնում մրցավազքի ժամանակ: Այն հավասար է 600 ոտնաչափի (≈ 300մ):

тела,
 Жилище Ануннаков тайное открыл
 он.
 Гильгамеш деревья рубит,
 Энкиду пни корчует.
 Энкиду ему вещает, Гильгамешу:
 «Друг мой, Гильгамеш! Мы кедр
 убили, –
 Повесь боевой топор на пояс,
 Возлей перед Шамашем возлиянье,
 –
 На берег Евфрата доставим кедр-
 ры»⁴⁴.

Եթե շումերական էպոսում խնկենին բերելու են գնում Գիլգամեշն ու Էնկիդուն, ապա ժողովրդական ավետիսներում, որպես կանոն, դրանք երեք մոգերն են՝ Մելլոնը, Գասպարն ու Բաղդասարը, կամ էլ 40 փահլանները⁴⁷։

Ծննդեան տոնին (հատված)

Իմա՛լ էնենք, իմա՛լ չէնենք:
 Քառսուն փետատ (քլունգ), քառսուն կացին
 Առնինք, էրթանք ծառ խնկենին⁴⁸:

Ավետիսներում կտրած խնկի ծառը 40 լծկան գոմեշներով իջեցնում են սարից, ապա լուղարկում դեպի Ուրֆա⁴⁹։

⁴⁶ Հին Արևելքի պոեզիա, կազմ. և խմբ.՝ Հ. Էդոյան, հայ. թարգմ.՝ Էդ. Սարոյան, Երևան, 1982, էջ 126:

⁴⁴ Эпос о Гильгамеше, “О все видавшем”. Пер. с аккад. И. Дьяконова, репр. изд. (ориг. изд. 1961). Санкт-Петербург, 2012, тб. V.

⁴⁷ Ավետիսներում 40 թիվը խորհրդանշական է: Քրիստոնեության համար կարևոր իրադարձություններն այդ թվով են իմաստավորվում. այդքան օր տևեց Մեծ ջրհեղեղը, և այդքան օր Նոյը մնաց տապանում, Դավիթ և Սողոմոն արքաներն այդքան տարի են տիրել Իսրայելին, 40 տարի Մովսեսը եբրայեցիների հետ շրջեց անապատում և այդքան օր մնաց Սինա լեռան վրա, այդքան օր Քրիստոսը ծոմել է և Հարությունից հետո այդքան օր է մնացել երկրի վրա:

⁴⁸ **Գրիգոր ք. Նժդեհեանց**, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. Ե, N 1, էջ 188-189:

⁴⁹ Ուրֆա [Ուռհա, Եդեսիա] քաղաքի հիմնադրման մասին պահպանվել են մի քանի ավանդություններ: Դրանցից մեկի համաձայն՝ քաղաքը հիմնադրել է Բելը, ըստ մեկ այլ ավանդության՝ այն կառուցվել է Աստվածաշնչում հիշատակված Ուր կոչված քաղաքի ավերակների վրա: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո նրա զորավար Սելևկոսը քաղաքը վերանվանեց Եդեսա (Էդեսա), մեկ աղբյուրի համաձայն՝ ի պատիվ իր դստեր, մյուս աղբյուրի համաձայն՝ Մակեդոնիայի նույնանուն քաղաքի պատվին: Ուրֆա-Եդեսիան բոլոր ժամանակներում շարունակել է մնալ Միջագետքի խոշոր կրոնապաշտամունքային կենտրոններից մեկը: Եդեսիայում է ապրել Օսրոյենների թագավորության Աբգար V հայոց արքան, որը նամակագրություն է ունեցել

Ձառ խնգենին, ուր շրոճեցին, ավետի՛ք,
 Քառսուն դան (տան) գոմեշ ուզեցին, ավետի՛ք,
 Ուր պերեցին, ուր լճեցին, ավետի՛ք,
 Սամին, սամթել ճըխճըխեցին, ավետի՛ք,
 Խըբար առան Ուրֆը քաղաք, ավետի՛ք...⁵⁰

Կան ավետիսներ, որտեղ մոգերը հիշատակվում են հպանցիկ և հետագա բովանդակության զարգացման մեջ այլևս չեն հիշատակվում (ստորև ներկայացվող «Թալին» ժողովածուի ավետիսը), ինչպես և հակառակը, որտեղ մոգերի թեման զարգացած է՝ մանուկ Հիսուսին երկրպագելը, երեք ընծաներ մատուցելը ևն: Այդ ավետիսները պայմանականորեն ընդունված է անվանել «**աստեղային**» (աստղի հետևից գնալը):

Այսօր տօն է Ծննդեան⁵¹ (հատված)

Ահա երեք արքա եկին, աւետիս.
 Որ երեքեանըն անուանին, աւետիս.
 Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս.
 Որք՛ի Սաբայ և յարաբայ, աւետիս.
 Ոսկի՛ կնդրուկ՝ զըմուռ նմա, աւետիս.
 Ունին երեք ազնիւ ընծայ, աւետիս.
 Ոսկին զպատին արքայական, աւետիս.
 Կընդրուկն ըզգարդ Աստուածութեանն, աւետիս.
 Զըմուռ որ էր անապական, աւետիս.
 Նըշան թաղման և յարութեան, աւետիս:

Տարածված են նաև «**քրիստոնեական**» բանաստեղծական տեքստերով ժողովրդական ավետիսներ⁵².

Երանելի⁵³ (հատված)

Մարիամ առավ իր մէր Որդին, աւետիս,
 Տարաւ նրան աշկերտութեան, աւետիս,
 Երբ այբութեն գիր գրեցին, աւետիս,
 Նա կըկարդար Սաղմոսարան, աւետիս,

Հիսուս Քրիստոսի հետ: Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի ստեղծման գյուտը նույնպես կապված է Եդեսիայի հետ (տե՛ս ՀՀՏԲ, հ. 2, էջ 167-168):

⁵⁰ «Թալին», էջ 69:

⁵¹ Քնար հայկական. Երգարան, խմբ.՝ Մ. Միանսարեանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 91-93:

⁵² Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N 5954, թերթ 99ա-100ա, գրառվել է XVIII դ., առաջին անգամ տպագրվել է Ա. Մնացականյանի «Հայ միջնադարյան ժողովրդական երգեր» գրքում, Երևան, 1956, էջ 331-332: **Քաջքերունի**, Տօներ // ԱՀ, Թիֆլիս, 1901, գ. VII և VIII, էջ 115-116: **Կոստանեանց Կ.**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ, Թիֆլիս, 1892, Ա պրակ, էջ 16-17:

⁵³ Տե՛ս **Փորքէեան Խ.**, Նոր Նախիջևանի բանահյուսութիւն. Աւետիսներ // ԱՀ, Թիֆլիս, 1910, գ. XX, N 2, էջ 102-104:

Սաղմոսարան երբ գրեցին, աւետիս,
 Նա կըկարդար շարականներ, աւետիս,
 Շարականներ երբ գրեցին, աւետիս,
 Նա կըկարդար աստվածաբան, աւետիս...⁵⁴

Նմանօրինակ ավետիսներ վերլուծելիս Լ. Սիմոնյանն իրավացիորեն նշում է. «Տեքստը շնչում է քրիստոնեական երգերին բնորոշ խորհրդապատկերայամբ և տոնի խորհրդի ոգեշնչվածությամբ, գրեթե ամբողջությամբ կառուցված է Աստվածաշնչյան թեմաների հիմքով... Ընդհանուր առմամբ՝ լեզվամտածողությամբ, մոտիվներով և կառույցով «քրիստոնեական» տեքստը հեղինակային-գրական է, սակայն բավական շատ են նաև ժողովրդական տարրերը...»⁵⁵:

Ժողովրդական ավետիսների գրեթե բոլոր օրինակներում «մայրիները կացնահարելու» տեսարանի նկարագիրը համարյա թե նույնն է: Կոմիտասի, Մ. Թումանյանի, Սպ. Մելիքյանի կատարած գրառումներում ավետիսները տրված են մեկ կամ երկու տիպական տողերով: Ստորև ներկայացվող երկու ավետիսները հնարավորինս ամբողջական բանաստեղծական տեքստով մեզ հասած **երգվող** ավետիսների ուշագրավ օրինակներ են:

ԱՎԵՏԻՏ⁵⁶ (Մուշ)

$\text{♩} = 160$

Ը - սօր ձը-նունդ էր Մըյ - րա-մին, ա - վն - տիք,
 շըն - չաց պե - րեց զՀի-սուս օր - դին, ա - վն - տիք,
 կետ Օր - դա - նան մը - զըր - դն - ցին, ա - վն - տիք,
 Մել - քոն, Կաս-պար, Տեր Բաղ - դա - սար, ա - վն - տիք:

Ըսօր ձընունդ էր Մըյրամին, ավետի՛ք,
 Շնչաց պերեց զՀիսուս օրդին, ավետի՛ք,
 Կետ Օրդանան մգրդեցին, ավետի՛ք,

⁵⁴ Խաչատուր Փորթճեյանի վկայությամբ այս ավետիսն առավել սիրված է եղել «ղարիբների տանը»: Եթե Ճրագալույցի երեկոյան շնորհավորելու եկող տղաները «Երանելին» ավետիսը չիմանային, մեծահասակներն այն մեղք կհամարեին և նրանց ներս չէին թողնի:

⁵⁵ **Սիմոնյան Լ.**, Տոմարային ծիսաշար, էջ 146-147:

⁵⁶ «Թալին», N 1, էջ 62, 69-70 (երգասացն է 80-ամյա մշեցի Ռեհան Գուլոյանը, ծն. 1890-ական թթ.): «Ավետիքի» մեկ այլ տարբերակ տե՛ս նույն տեղում, N 2 (երգասացն է Վարդանուշ Ղուկասյանը, Սասուն):

Մելքոն, Կասպար, Տեր Բաղդասար, ավետի՛ք,
 Էլան վերցին զթաղսի¹, կացին², ավետի՛ք,
 Կացին սարով, իճան ծորով, ավետի՛ք,
 Մելքոն, Կասպար, Տեր Բաղդասար, ավետի՛ք,
 Կացին հրսան ձառ խնգենին, ավետի՛ք,
 Առնին գացին³ ուր⁴ զըրգեցին, ավետի՛ք,
 Գաթ մը արուն ուր բոխացին, ավետի՛ք,
 Ձառ խնգենին, ուր շրոճեցին, ավետի՛ք,
 Քառսուն դան⁵ կումեշ⁶ ուզեցին, ավետի՛ք,
 Ուր պերեցին, ուր լճեցին, ավետի՛ք,
 Սամին⁷, սամթել⁸ ճըխճըխեցին⁹, ավետի՛ք,
 Խըբար առան Ուրֆը քաղաք, ավետի՛ք,
 Բառքու մոզիկ ուր պերեցին, ուր լճեցին, ավետի՛ք,
 Աեճին հորհոր¹⁰ ուր էնեցին, ավետի՛ք,
 Ասիս-Մասիս սար ւնցըցին, ավետի՛ք,
 Մինի հորոր ուր էնեցին, ավետի՛ք,
 Գաթնոց ախպուր ճուր խըմցըցին, ավետի՛ք,
 Հեդին¹¹ հորհոր ուր էնեցին, ավետի՛ք,
 Տաջարի տուռ ուր կանըցին, ավետի՛ք...⁵⁷

Ինչպես արդեն վերը նշվեց, ներկա ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում **ավանդական** ժողովրդական տեքստերով ավետիսները. մեր խորին համոզմամբ ավետիսների առավել արխայիկ շերտերը պահպանվել են հենց այդ տեսակներում: Ավետիսներում նշմարվում են մի շարք օրինաչափություններ՝ պայմանավորված տվյալ ժանրին բնորոշ տաղաչափական, մեղեդիական, ձևակառուցողական, մետրադիթմական տիպական առանձնահատկություններով: Ավետիսների ճնշող մեծամասնությունը շարադրված է ութվանկանի տաղաչափությամբ⁵⁸.

կամ՝
 Այ – սօր Ծը – նունդն էր Մայ – րա – մի,
 Մայ – րամ գը – նաց դուռն ի հէ – րին

⁵⁷ 1) զթաղսի, թաղսի – կացին, 2) կացին – գացին, գնացին, 3) գացին- կացին, թաղսի, 4) ուր – որ, 5) դան – տան, 6) կումեշ – գոմեշ, 7) սամի, սամիք – եզի, գոմեշի, լծափայտին կապող ծողիկներ, որոնք պատրաստվում են շատ ամուր փայտից կամ երկաթից, 8) սամթել, սամիթել, սամոտեն – սամիքը կապելու պարան, որպես կանոն՝ կաշվից, 9) ճըխճըխեցին – ջախջախեցին, 10) հորհոր – բացականչություն՝ հո-ր, 11) հեդին – վերջին:


⁵⁸ Որպես կանոն ավետիսների առաջին մասերում տաղաչափությունը կայուն պահպանվում է (Հիսուսի Ծնունդը, Խնկի ծառը, տաճարի կառուցումը նկարագրող հատվածները), և միայն վերջին՝ չորրորդ հատվածում (տան փոքրի օրինանքը) նկատվում է ազատ շարադրանք:

Յուրաքանչյուր տող ավարտվում է եռավանկ՝ «ա – վե – տիս» կամ «յա – լե – յու» կամ էլ՝ քառավանկ «ա – լե – լու – յա» **կրկնակով**: Այսպիսով, ունենք 11-վանկանի (8+3) կամ 12-վանկանի (8+4) տողերով կառույց⁵⁹: Ավետիսների **յամբական երկանդամ 8-վանկանի ոտանավորի** գլխավոր շեշտերը 4-րդ և 8-րդ վանկերի վրա են.

Ա – ռին խի – զիր, ա – ռին կյւ – ցի՛ն,
Գւ – ցին խա – սա՛ն Չան – չա մե – րի՛ն...

և պետք չէ կարծել, թե այս չափը յամբական միանդամ **4-վանկանի** ոտանավորի կրկնությունն է: Արեղյանն իրավացիորեն նշում է. «Ռիթմիկ երաժշտականության կողմից մեր այս շատ սիրված ոտանավորը (ութվանկանի) մեր չափերի մեջ լավագույններից է, զի սովորաբար թե՛ պարզ և թե՛ բարդ ոտքերի ռիթմն զգալի է»⁶⁰: Ուշագրավ է, որ այս վանկաչափական մոդելը բնորոշ է նաև սլավոնների Ծննդյան երգերին՝ **կոչադաներին**. Մասնագետների կարծիքով երգի «մոտորային» կշռույթը պայմանավորված է քայլելու՝ երթի ընթացքում կատարվելու ֆունկցիայով⁶¹:

Ժողովրդական ավանդական ավետիսների (ինչպես և տոնական, ծիսական, վիպական ժանրերին պատկանող ցանկացած երգ) ձևակառուցողական կարևորագույն բաղադրիչը **երաժշտական բանաձևային մտածողությունն է՝** մեղեդու տիպական (մոդուլային) **կառուցվածքը**: Ծննդյան երգերում գերիշխում է էոլական լադը⁶², որտեղ գործուն նշանակություն ունի վերջնաձայնից՝ ֆինալիսից (T) ցած ընկած դորիական տրիտորդը.



Չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ VI⁺ → VII → T վերընթաց քայլը հայկական ժողովրդական երգաստեղծության **հնագույն կորիզն է**. այդ երաժշտական դարձվածքով են սկսվում հայ երգաստեղծության առավել արխաիկ շերտը կազմող **ծիսական** երգերը⁶³:

⁵⁹ Հազվադեպ հանդիպում են նաև այլ վանկաչափական մոդելներով ավետիսներ, որոնք կարելի է շեղում համարել (օրինակը տե՛ս **Վարդանյան Ս.**, Պաշտամունքային տարրերը «Ալեյույայի» արցախյան տարբերակներում // ՊԲՀ, Երևան, 2002, N 2, էջ 151):

⁶⁰ **Արեղյան Մ.**, Երկեր, Երևան, 1971, հ. 5, էջ 168-169:

⁶¹ Տե՛ս **Земцовский И.** Мелодика календарных песен, Москва, 1975, стр. 48; **Можейко З.** Календарно-песенная культура Белоруссии. Минск, 1985, стр. 89.

⁶² Մենք խուսափում ենք լադի **հիպոդորիական-էոլական** ձևակերպումից, քանզի դորիական բարձր սեքստան (VI⁺) գործում է միայն ստորին հատվածում, իսկ T-ից վեր քառալարում այն բացակայում է:

⁶³ Այդպես, օրինակ, նորափեսային գովերգող երգերի՝ Թագվորագովքերի («Մեր թագվորին ի՛նչ պիտի», «Թագվոր բարով», «Գացե՛ք, բերե՛ք, թագվորամեր»), ինչպես

ԵՐԳ ԾՆՆԴՅԱՆ⁶⁴

$\text{♩} = 46$

Հա-սօր ծը-նունդն ի Մար-յա-մա, ա - լե-լու-յա, Մար-յամկը-նագ
տոտն ի հե-րին, ա - լե-լու-յա, քյա-մակ ի-տու խա - չա-փե-տին,
ա - լե-լու-յա, շըն-չավ ի-պի Քյրիս - տոստր-տին, ա - լե-լու-յա:

Հա-սօր ծընունդն ի Մարյամա,
ալելույա,
Մարյամ կընդ տունն ի հերին,
ալելույա,
Քյամակ իտու խաչփետին,
ալելույա,
Շընչավ իպի Քյրիստոս տրտին,
ալելույա:
Հիսուս տրտուն մըկըրտեցին,
ալելույա,
Պարթ խանձարուր փաթեցին,
ալելույա,
Սուրփ Հովանէս քյաւոր էրին,
ալելույա,
Սուրփ Հօռօմսիմ տատմէր էրին,
ալելույա:
Էրանեկ քյի, սուրփ Հովանէս,
ալելույա,
Տալ Քյրիստոսին քյաւոր էլաւ,
ալելույա,
Էրանեկ քյի, սուրփ Հօռօմսիմ,
ալելույա,
Տալ Քյրիստոսին տատմէր էլաւ,
ալելույա,
Էրանեկ քյի, կյետ Հօրտանան,
ալելույա,

Արին կյերան, կըկարճանէր, ալելույա,
Տրիցին սուն՝ կըհերկնանէր, ալելույա,
Պատեր տըրին, թըմմիցին,
ալելույա:
Կապին տանիս, տառ տըրանդին,
ալելույա:
Ծեր տան սըներ ծառ ին խընգյի,
ալելույա,
Պատեր շարուկ մարմար քյարից,
ալելույա,
Ալաշ վերէն ծալ-ծալ տսկի, ալելույա,
Խողն ի վերէն սուրփ մարկըրիտ,
ալելույա,
Թօնէր ինի քյանց յեղկացին,
ալելույա,
Տախտակ վերէն՝ փինա ծածկոց,
ալելույա,
Խարսներ պալուր քյանց յեղվընեկ,
ալելույա,
Ավելն ի ծեռ փունջ մանուշակ,
ալելույա:
Արմեն ճութ էր, էլ ճըթացավ,
ալելույա,
Քյանց բարդի ծառ էլ հերկնացավ,
ալելույա,
Քյանց ուղի ծառ էլ կանաչավ,

և Բարեկենդանի («Էկե՛ք, տեսե՛ք, ի՞նչն է կերե գին») երգերի ճնշող մեծամասնության մեջ այդ մեղեդիական քայլն առկա է:

⁶⁴ «Հայրենի երգեր», Հայրիկ Մուրադյանի ծայնից վերծ., կազմ. և խմբ.՝ Ա. Փահլանյան, Երևան, 2007, N 57, էջ 86, 90-91:

Քրիստոս մնչ քի մըկըրտեցին,
 ակելույն:
 Էրանեկ քի, պմրթ խանձմրուր,
 ակելույն,
 Քրիստոս մնչ քի փաթաթիցին,
 ակելույն,
 Էրանեկ քի, պանցրիկ մսուր,
 ակելույն,
 Քրիստոս մնչ քի օրորեցին,
 ակելույն:
 Առին խիզմր, առին կացին, ակելույն,
 Կյացին խասան Չանչա մերին,
 ակելույն,
 Կյացին զարկին ծառըն տըքյաց,
 ակելույն,
 Խիզմր թացին՝ էրուն ֆըշշաց,
 ակելույն:
 Արին, չարին չուր կըտրիցին,
 ակելույն,
 Քյառսուն կյոմէշ մէշ լըծիցին,
 ակելույն,
 Մէկ խատ մէկու չըտժիցին, ակելույն,
 Սըսմ, Մասսմ սարն ընցուցին,
 ակելույն,

ակելույն,
 Քյանց կաղնի ծառ էլ պընդացավ,
 ակելույն:
 Արմեն նըստիր ծառի տակին,
 ակելույն,
 Բըռչամ թակիր ծառի ծերին, ակելույն,
 Սուֆրէն հիրճև՝ խազար պարին,
 ակելույն,
 Կըթխէն ի ծեռ նըռան կյինին,
 ակելույն:
 Մամիկ, մամիկ յէս քի ծառա,
 ակելույն,
 Տոն մանունին մէկ գյավ արա,
 ակելույն,
 Սօլեր խակյի, տը ճըռվըռա, ակելույն,
 Կոթնին խակյի, տը խըշխըշա,
 ակելույն,
 Մաղըմ կօքյօվ, մեկն էլ չամիչ,
 ակելույն,
 Նմ տըղէտեր ճամբխու արա,
 ակելույն:

Ինչպես շումերական էպոսում⁶⁵, այնպես էլ ժողովրդական ավետիսներում Խնկենին տապալվում է երեք հարվածից.

Զառչի (առաջին) թաղսին (կացին) օր զրկեցին, ավետի՛ք,
 Ծառն օր ճըչաց, ճուղն որոտաց, ավետի՛ք,
 Մինի թաղսին որ զըրկեցին, ավետի՛ք,
 Կաթ մը արուն ուր բոխաց, ավետի՛ք,
 Եդի թաղսին օր զըրկեցին, ավետի՛ք,
 Ծառ խնկենին պառկցցին, ավետի՛ք...⁶⁶

Ժողովրդի բանավոր հիշողության ծալքերում զարմանալի տողեր են պահպանվել.

Առին խիզմր (սղոց), առին կյացին (կացին),

⁶⁵ Առաջին երկու հատվածը երկսայր կացնով (секира)՝ տապարով (1 տաղանդ քաշով ≈ 30 կգ) հասցնում է Գիլգամեշը (ծոծրակին և կրծքին), երրորդ հարվածով էնկիդուն թրով գլխատում է հսկային: Հումբաբային հասցրած ամեն մի հարվածից մայրիները տնքում էին:

⁶⁶ «Թալին», էջ 70:

Կյւնցին (գնացին) խասան **Չանչա մերին**

Կյւնցին (կացին) գւնկին ծառըն տըքյաց,

Խիզար թւնցին էրուն (արուն) ֆըշաց,

Արին, չարին չոր կըտրիցին,

Քյունուն կյունէ մէշ լըծիցին...⁶⁷

Ինչպես վկայում է Ա. Փահլևանյանը Հայրիկ Մուրադյանի խոսքերից, «Չանչա մերին» (մայրի) եղել է սրբազան անտառ՝ մայրիների պուրակ: Բառարաններում չգտնելով «Չանչա» բառի բացատրությունը՝ հնարավոր ենք համարում, որ այն Շամաշ աստծո՝⁶⁸ [Չանչա-Չամչա-Շամշա] անվան աղավաղված տարբերակն է:

«Друг мой, Гильгамеш! Мы кедр
убили, –
Повесь боевой топор на пояс,

Возлей перед Шамашем возлиянье, –
На берег Евфрата доставим
кедры»⁶⁹.

«Եղբայր իմ, Գիլգամեշ: Մենք
տապալեցինք մայրիները:
Մարտական կացինը գոտուդ
կախիր,
Շամաշի առաջ հեղում կատարիր,
Եփրատի ափը տանենք
մայրիները»⁷⁰:

Մասնագետների կարծիքով մայրիների «որսը» շատ ավելի վաղ է սկսվել, քան այդ մասին հիշատակում են Աքքադի տիրակալներ Սարգոն Շարուկմենի (մ.թ.ա. 2316-2261) և Նարամ Սուլեի (մ.թ.ա. 2237-2200) սեպագիր արձանագրությունները⁷¹: Պետք է նշել, որ Լիբանանի լեռները, որտեղից իբրև բերել են մայրիները, հիշատակված են միայն էպոսի աքքադերեն տարբերակում, ամենայն հավանականությամբ Սարգոն արքայի՝ դեպի Լիբանան կատարած արշավանքների տպավորությամբ: Անհնար է պատկերացնել, թե ինչպես էր հնարավոր Լիբանանի լեռներից մայրիները Եփրատով լուղարկել դեպի Ուրուկ (Շումեր), այն դեպքում, երբ Լիբանանը Եփրատի ավազանի հետ կապ չունի ու չի էլ ունեցել: Պետք է նշել՝ էպոսի ավելի վաղ՝ շումերական տարբերակում մայրիների «հայրենիքը» չի հիշատակվում⁷²: Միջազգետքյան

⁶⁷ «Հայրենի երգեր», էջ 90:

⁶⁸ Շամաշը [շումեր. Ութու] աքքադա-բաբելոնական դիցաբանության մեջ արևի աստվածն էր, որն ուղղորդում և քաջալերում էր Գիլգամեշին: Հումբաբային սպանելու և սրբազան անտառից մայրիներ բերելու միտքը Շամաշն էր խրախուսում, այդ իսկ պատճառով մայրիների անտառը երբեմն կոչել են «Շամաշի մայրիներ»: Աքքադա-բաբելացիների արևի աստված Շամաշի պաշտամունքն առաջուր պահպանված է եզդիների հավատքում:

⁶⁹ Эпос о Гильгамеше, “О все видавшем”.

⁷⁰ Հին Արևելքի պոեզիա, կազմ. և խմբ.՝ Հ. Էդոյան, հայ. թարգմ.՝ Էդ. Սարոյան, Երևան, 1982, էջ 126:

⁷¹ Sumerian History of the Ancient East. Mesopotamia. Под ред. И. Дьяконова. Москва, 1983, стр. 306:

⁷² Մայրիների լեռների տիրակալ Խուվավան [Հումբաբա] իրեն համարում էր **խու-**

սկզբնաղբյուրները վերլուծելով՝ անվանի ասորագետ Վլադիմիր Յակոբսոնը հայտնում է, որ շումերները մայրին բերում էին ոչ թե Լիբանանից, այլ Շումերից հյուսիս-արևելք ընկած լեռներից՝ Հայկական լեռնաշխարհից: Նա միաժամանակ նշում է մայրու մի քանի տեսակ՝ հիշատակված շումերական աղբյուրներում, որոնք առայսօր աճում են Հայկական լեռնաշխարհում՝ Զագրոսի լեռներում⁷³:

Հասկանալի է, որ **մայրին**⁷⁴ շումերական էպոսում խորհրդանշում է **Կենաց ծառ** (Տիեզերական ծառ, Կյանքի ծառ, Arbor mundi)՝ իր խորհրդաբանական պաշտամունքային ողջ համակարգով, որի կարևորագույն բաղադրիչն է **սարը**, լեռը՝ տիեզերական կենտրոն (axis mundi)⁷⁵: Մայրին օգտագործվել է շատ կարևոր և թանկ շինությունների՝ Դավթի, Սողոմոնի և Երուսաղեմի տաճարների կառուցման համար (Թագ., 5:11, 7:7): «Մեր տների գերանները մայրուց են, ու մեր առաստաղները եղևնափայտից» (Երգ Երգոց, 1:17) տողերում, մայրու հավիտենական խորհրդից զատ, Օրիգենեսն ընդգծում է բարոյական կողմը. «Մեր տների հիմնասյուները պատրաստված են մայրենուց, որպեսզի մեր հոգիները պահպանված լինեն տարրալուծումից»՝ նկատի ունենալով մայրու անփուտ և անապական հատկությունը⁷⁶.

«Սրունքները մարմարյա սյուներ են՝

Ընտիր ոսկուց խարիսխների վրա հաստատված.

Կերպարանքը՝ Լիբանանի պես,

Մայրիների պես գերազանց» (Երգ Երգոց, 5:15)

Մայրիների փարթամ անտառները հարյուրավոր տարիներ զարդարել են Լիբանանի լեռները, և Հին Արևելքի ժողովուրդների կողմից դարեր շա-

ռում լեռան որդի: Խուռռումի հետ կապը ենթադրում է, որ մայրիների լեռները գտնվել են Վանա լճի հարավ-արևելք տարածվող լեռների [Կորդվաց, այժմ՝ Հաքյարի] շրջանում (տե՛ս **Մովսիսյան Ա.**, Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Երևան, 1992, էջ 17):

⁷³ **Якобсон В.** Куда Гильгамеш ходил за кедами? // “Кавказско-Ближневосточный сборник”, Тбилиси, 1988, VIII, стр. 128-132.

⁷⁴ Մայրին [Кедр, Cedrus] սոճազգիների ընտանիքի մշտադալար փշատերև ծառերի ցեղ է, որը բարենպաստ կլիմայական պայմաններում կարող է ունենալ 5-6 մետր բնի հաստություն, շուրջ 50 մ բարձրություն և ապրել մոտ 3000 տարի: Հին Հայաստանում հարգի է եղել հատկապես փյունիկյան մայրին: Մայրին մարդկությանը հայտնի ամենամուր և թեթև փայտերից մեկն է, որի թանկարժեք խեժը Հին աշխարհում շատ բարձր է գնահատվել: Ծառի բարձր խեժատվությունն ապահովում էր փայտի «հականելիչ և անփուտ» հատկությունները, որոնք անփոխարինելի էին նավաշինության մեջ: Ավանդության համաձայն՝ Նոյի տապանը պատրաստված է եղել մայրու փայտից, որն Աստվածաշնչում հիշատակված է «գոֆեր» անունով (տե՛ս Библейская энциклопедия. Трудъ и издание Архимандрита Никифора. Москва, 1891, 1990, стр. 387).

⁷⁵ Տե՛ս **Топоров В.** Мировое Древо. Универсальные знаковые комплексы. Москва, 2010, том 2, стр. 306-324.

⁷⁶ Экзегетические труды Оригена: Толкование на Ветхий Завет // Альманах “Альфа и Омега”, Москва, 2004, N 42.

րունակ մայրին պաշտամունքի է արժանացել. բնական էր, որ քրիստոնեությունն այդ հավատամքը պիտի ժառանգեր:

Հայոց մեջ **մայրու** մեծ պաշտամունքի վկայություն է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որն իր անունը ստացել է Խոսրով Գ Կոտակ (գահակալել է 330-338 թթ.) թագավորի պատվին: Գառնու ամրոցից մինչև Մեծամորի դաշտը՝ Դվինի բլուրը, Խոսրովը կատարեց անտառատնկումներ. «Եվ այսպես **մերի** (մայրի) տնկեցին գետի ընթացքով (Երասխա) դեպի ներքև՝ Տիկնունի ապարանքը: Նա այս մերին (անտառը) կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ՝ եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: Մերին աճեց ու բարձրացավ»⁷⁷:

Թե որքան պաշտելի է եղել մայրին հայոց մեջ, վկայում է ծառի անվանումը՝ մայրի (մայր, մայրիկ, ծնող) իմաստով: «**Մայր**» արմատը փոխառնված չէ ոչ մի լեզվից և **բնիկ հայ բառ** է (սանսկրիտում՝ *mātar*, հնդկ. Նախալեզվում՝ *māter*, որից էլ լատիներեն *materia*՝ «շինության համար փայտ, նիւթ»⁷⁸):

Ավետիսներում, ինչպես կարելի է նկատել, մայրու փոխարեն հիշատակվում է **խնկի ծառը**, և առհասարակ հայկական ժողովրդական երգերում խնկենին **նվիրական ծառի** իմաստ ունի: Նշենք, որ **խնկենին** չի սահմանափակվում մեկ ծառատեսակով, և մեզ հայտնի առնվազն չորս տարբեր ծառատեսակներ կարող են հավակնություն ունենալ **նվիրյալ խնկի ծառի** «կոչմանը»: Այն խնկենին, որից ստանում են **խունկը**՝ խնկախեժը, **Բոսվելիա**⁷⁹ [*Boswellia*] ծառի տեսակն է: Խնկախեժը ստանում են բոսվելիայի կեղևը կտրելով, իսկ ծառի զարմանալի հատկություններից է վերականգնողականությունը. կտրված կեղևը շատ արագ փոխարինվում է նոր աճածով: Մեր ունեցած տվյալների համաձայն՝ Հայկական լեռնաշխարհում բոսվելիան չի աճել.

«Մեր դռանը խնկի ծառ...

Ձեր դռանը խնկի ծառ»...

Նմանատիպ տարածված և սիրված խաղիկներում ժողովուրդը հա-

⁷⁷ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, գլ. Ը, էջ 32-33:

⁷⁸ Աճառյան Հ., ՀԱԲ, Երևան, 1977, հ. 3, էջ 246-247:

⁷⁹ Բոսվելիան 4-5-մետրանոց (հազվադեպ 6 մ) ծառ է, մուգ շագանակագույն ամուր բնով և թղթանման կեղևով: Աճում է հիմնականում Կարմիր ծովի հյուսիսային շրջաններում, հատկապես առատ՝ Արաքիայում և Սոմալիում: Դեռևս հին եգիպտացիները, խիստ պաշտելով խնկենին, փորձեր են կատարել այն աճեցնելու եգիպտոսում, բայց ապարդյուն: Անհիշելի ժամանակներից խնկախեժը եղել է առևտրի կարևոր միավորներից և շուկայում մեծ պահանջարկ ունեցող մթերքներից: Պարսկաստանում առայսօր տարբերում են «երկու սեռի» խնկախեժ՝ «արական» (մուգ դեղին, կարմրավուն) և «իգական» (բաց դեղնավուն, սպիտակ):

վանաբար նկատի է ունեցել **Պիստակենին**⁸⁰ կամ **Նշենին**⁸¹, երկուսն էլ առավել հայտնի են **խնկի ծառ** անվամբ: Սակայն, եթե պիստակենին սովորական պտղատու ծառ է, ապա նշենին բացառիկ դեր և նշանակություն ունի կրոնական խորհրդաբանական համակարգում: Փոյուզիական տիեզերաբանության մեջ խնկենին (նշենի) հանդես է գալիս որպես բնության արարման նախահայր⁸², Իսրայելի որդիների 12 ցեղերի միջև պայքարն ավարտվեց Ահարոնի հաղթանակով, նա միակն էր, ում գավազանը բողբոջեց՝ պատվելով նշենու ծաղիկներով և պտուղներով (Թվոց XVII, 8): «Բարի ավետում»-ը ներկայացվող տեսարանում Մարիամի կողքին պատկերված է խնկենին⁸³:

Այդուհանդերձ, վերադառնանք «Ծննդյան երգերին» և **մայրի-խնկենուն**: Ավետիսներում սրբազան տաճարի կառուցման նկարագիրը ժողովրդական չափաժո բանահյուսության կոթողներից է.

Ծեր (ծեր) տան սըներ (սյուներ) ծառին խընգյի,
Պատեր շարուկ մարմար քյարից,
Ալաշ (տանիք) վերէն ծալ-ծալ տսկի,
Խողն (հողը) ի վերէն սուրփ մարկյըրիտ,
Թօնէր (թոնիր) ինի քյանց յեղկւնցին (եկեղեցին)
Տախտակ վերէն՝ փինա (ասեղնագործ) ծածկոց,
Խասներ պակոր քյանց յեղվընեկ (աղավնի)
Ավելն ի ծեռ փունջ մանուշակ...⁸⁴

Աստվածային տուն-տաճարի կառուցման նկարագիրը պարզապես հիացնում է բանաստեղծական երևակայությամբ. խնկի ծառից պատրաստված սյուները, մարմարյա պատերը, վրան մարգարիտ շաղ տված (այլ տարբերակներում՝ խնկի փոշի) և ոսկու շերտով պատած տանիքը, եկեղեցի

⁸⁰ Պիստակենին [Pistacia] 6-8 մ բարձրությամբ ծառ է, համեղ և սննդարար պտուղներով՝ պիստակներով («Ֆլստիս»): Պտուղներն ունեն տոնուսը բարձրացնող հատկություն, որի շնորհիվ պիստակենին անվանում են «կյանքի ծառ» (տե՛ս **Հարությունյան Լ.**, Հայաստանի դենդրոֆլորան, Երևան, 1985, հ. 2, էջ 88):

⁸¹ Նշենին [Amygdala] մինչև տերևների հայտնվելը բնության մեջ առաջինն է բողբոջում և ծաղկում: Հայաստանի բնության մեջ բնաշխարհիկ է, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

⁸² Բնության զարթոնքի, վերարտադրողական ուժերի, մեռնող և հարություն առնող աստծո՝ փոյուզիացի Ատտիսի մայրը՝ կույս Նանան, կրծքին դնելով նշենու ճյուղը, հղիացել և լույս աշխարհ է բերել Ատտիսին (տե՛ս **Փրօշեր Դ.** Золотая ветвь. Москва, 1980, стр. 387):

⁸³ Քրիստոնեության մեջ խնկենին (նշենի) աստվածային, բարեհաճության, անմեղության և անարատության խորհրդանիշն է: Աստվածամոր և Քրիստոսի կերպարների շուրջ լուսապսակը՝ մանդորլան [լատ. mandorla՝ նուշ], որն աստվածային լույսի խորհրդանիշ է, նույնպես նշան է (տե՛ս Символы, знаки, эмблемы // Энциклопедия, Москва, 2005, стр. 286):

⁸⁴ «Հայրենի երգեր», էջ 91:

դարձած թոնիրը⁸⁵ ևն: Որոշ ավետիսներում տաճարը նույնացվում է Երուսաղեմի կամ Էջմիածնի հետ. երկնային քաղաք-տաճարի կառուցման համար մեկ գերան սյուն է պակասում.

Երուսաղեմ նոր շինեցին, ավելուե՛ա,
 Շինեցին, թամամեցին, ավելուե՛ա,
 Սան մ'ու գերան պակասեցուցին, ավելուե՛ա...⁸⁶
 Էջմիածին որ շինեցին, ավելուե՛ա,
 Սին ու գերան բար (հավասար) բռնեցին, ավելուե՛ա,
 Ուստա բնէք շիվարցուցին, ավելուե՛ա...⁸⁷

Ավետիսներում նկարագրվող տուն-տաճարի կառուցման վերաբերյալ Ա. Մնացականյանը գրում է. «Նավասարդյան տոնախմբությունների ժամանակ կառուցվել են հատուկ դեկորատիվ շենքեր: Այդ շենքերը շատ հնում ձգտել են արտահայտել նախնիների և ամբողջ տոհմի պատկերն ու գաղափարը, իսկ հետո այդ ֆոնի վրա երևան են եկել նոր աստվածությունների գաղափարները»⁸⁸:

Ավետիսի այդ հատվածը որքա՞ն հեռավոր ժամանակների հետքեր կարող է կրել... Անշուշտ, այն կարելի է կապել քրիստոնեական գաղափարախոսության հետ, սակայն այդ դեպքում կկորցնենք առնվազն 3000 տարի:

Տաճարի կառուցման նմանատիպ հատվածների հանդիպում ենք «Էն-Մերքարը և Արատտայի գերագույն քուրմը պոեմում»⁸⁹:

О, сестра моя Инанна! Сделай так, чтобы жители Аратты
 Искусно выделявали золото и серебро для Урука,
 Чтобы они приносили благородный лазурит⁹⁰, извлеченный из скал,

⁸⁵ Թոնիրը (օջախը) տան ամենասուրբ մասն է համարվել, ինչպես եկեղեցում՝ խորանը: Օջախը նույնացվել է ընտանիքի, գերդաստանի, տոհմի հետ: Այն գյուղերում, որտեղ եկեղեցի չի եղել, պաակի արարողությունը կատարել են տան օջախի շուրջը (տե՛ս **Լալաեան Եր.**, Հաւատք. Կրակի պաշտամունք // ԱՀ, Թիֆլիս, 1897, գ. Բ, էջ 194-196):

⁸⁶ **Գրիգոր ք. Նժդեհեանց**, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. Ե, էջ 188:

⁸⁷ **Վ. վրդ. Տեր-Սինասեան**, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ. Պոլիս, 1904, էջ 26:

⁸⁸ **Մնացականյան Ա.**, Հայկական զարդարվեստ, էջ 563:

⁸⁹ «Էն-Մերքարն ու Արատտայի գերագույն քուրմը» էպիկական պոեմը Շումերի տարածքում պեղումների ընթացքում առայսօր հայտնաբերված ամենածավալուն տեքստն է և առավել հինը՝ համաշխարհային գրականության մեջ այդ ժանրի առաջին օրինակը: Պոեմը վերականգնվել է 20 պնակիրների վրա (23x23 սմ, 12 աղյուսների բաժանված շուրջ 600 տող) փորագրված սեպագիրներից (տե՛ս **S. N. Enmerkar and the Lord of Aratta. A Sumerian tale of Iraq and Iran. Philadelphia, 1940, p. 17**).

⁹⁰ Լաջվարդի [լազուրիտ] ամենամեծ հանքերը Բաղաշխանում են [Աֆղանստան], այդ իսկ պատճառով որոշ մասնագետների կարծիքով Արատտան գտնվել է այդ տարածքում: Ասորական աղբյուրները հայտնում են նաև Վանի թագավորությունում լաջվարդի հանքերի մասին (տե՛ս **Дьяконов И.** Ассирийско-вавилонские источники по истории Урарту // “Вестник Древней истории”, Москва, 1951, N 50 (41)).

Чтобы они приносили драгоценные камни и благородный лазурит,
Пусть они построят...
Священный гипар⁹¹, который ты избрала своим жилищем,
Пусть народ Аратты искусно украсит его изнутри.
Тогда я сам вознесу в нем молитвы...

...

Пусть жители Аратты
Принесут со своих высот горные камни
И построят для меня большой храм, большое святилище,
Воздвигнут для меня большое святилище, святилище богов...⁹²

Այս նամակում Ուրուկի տիրակալ Էն-Մարքարը [Էն-Մերկար] (մ.թ.ա. XXVII դար) Արատտայի տիրակալ Էնսուփքեշդաննայից⁹³ պահանջում է Ինաննա⁹⁴ դիցուհու պատվին տաճար կառուցելու համար շինանյութ և թանկարժեք քարեր արտահանել Շումեր: Շումերական գրույցներում Արատտան բազմիցս հիշատակվում է որպես **անուշահոտ մայրիների** երկիր, որը Շումերից հյուսիս-արևելք՝ յոթ սար այն կողմ է⁹⁵: Արատտան հարուստ է եղել ոսկու, արծաթի, պղնձի, լաջվարդի⁹⁶ հանքերով և այլ թանկարժեք ապրանք-

⁹¹ Գիպար [гипар]՝ տաճարի ամենասուրբ վայրը, որտեղ բնակվել են քրմերը:

⁹² «Անմահների լեռը [երկիրը]» պոեմի հայերեն թարգմանությունը չունենալով՝ անհրաժեշտ մեջբերումները ներկայացնում ենք ռուսերենով (տե՛ս **Крамер С.** История начинается в Шумере. Пер. Ф. Мендельсона, под ред. В. Струве. Москва, 1965, стр. 36-37):

⁹³ Էնսուփքեշդաննան հիշատակվում է որպես Հայկական Արատտայի առաջին թագավոր և գերագույն քուրմ [կառավարել է մ.թ.ա. 2610-2560] (տե՛ս «Армянские царские династии» // Русская энциклопедия «Традиция». Ред. и осн. К. Крылов, С. Нестерович, <http://traditio.ru>):

⁹⁴ In-an-na [բաբելաասորական Իշտար]՝ սիրո և պտղաբերության աստվածուհի, որին վերագրել են նաև պետական իշխանության և պատերազմի հովանավորուհու հատկանիշները: Էնմերքար տիրակալի մասին պահպանված շումերական պոեմի համաձայն՝ Ինաննա աստվածուհին ի սկզբանե եղել է Արատտայի գլխավոր դիցուհին՝ բերքի, ամուսնության, պտղաբերության, առատության ևն, և միայն ավելի ուշ շրջանում նա ընդգրկվել է շումերական աստվածությունների կազմում:

⁹⁵ Այդ «առեղծվածային» երկրի աշխարհագրական դիրքի տեղակայման հարցի շուրջ մի քանի վարկած կա [Քուրդիստանից մինչև Հնդկաստան]: Անվանի շումերագետ Սամուէլ Կրամերն առաջինն էր, որ Արատտան «տեղադրեց» Հայկական լեռնաշխարհում՝ Ուրմիա և Վանա լճերի միջև (տե՛ս **Крамер С.** История начинается в Шумере, стр. 32): Այնուհետև անգլիացի հնէաբան Դևիդ Ռոյը, զուգահեռներ անցկացնելով Aratta-Ararat-Urarta անվանումների միջև՝ ուղղակիորեն մատնանշեց Հայոց աշխարհը՝ տեղադրելով այն Արարատ լեռան շրջակայքում (տե՛ս **Рол Д.** Генезис цивилизации. Откуда мы произошли. Пер. с англ. С. Голова, А. Голова. Москва, 2002, гл. I, II): Մ. Գավրիլյանն Արատտան նույնացնում է Մեծամորի հետ՝ հիմք ընդունելով այն, որ Մեծամորն այդ ժամանակաշրջանում ունեցել է աստղադիտարան և հարուստ մշակույթ (տե՛ս **Kavoukjian M.** Armenia, Subartu and Sumer. Montreal, 1987, pp. 65-72):

⁹⁶ Ուշագրավ է, որ որոշ եվրոպական աղբյուրներում լաջվարդը կոչվում է «հայկա-

ներով, ինչպես և այդ ամբողջ հումքը մշակող վարպետներով և շինարարներով: Շումերական սեպագրերում Արատտային տրվում է «սուրբ օրենքների երկիր» պատվանուն-մակդիրը⁹⁷:

Գիլգամեշի մասին պոեմում Արատտայի հիշատակումը հետևյալն է.

Они – звезды небесные,
Пути на земле знающие,
Среди звезд в небесах сияющие,
К Аратте пути указующие...⁹⁸

Պետք է նշել, որ Արատտա անվանումը շումերերենում բացատրություն չունի և ամենայն հավանականությամբ այդ երկրի բնակիչների իրենց իսկ երկրին տրված անունն է⁹⁹: Գամկրելիձեի և Իվանովի կարծիքով այն պետք է մեկնաբանել հնդեվրոպական հիմքի վրա. «Aratta» անունը ծագում է հնդեվրոպական «ջրեր, գետ» արմատից¹⁰⁰, ինչպես ասուրաբաբելական աղբյուրներում **Նաիրի** («գետ») անվանումը: Այս անվան ստուգաբանման և վերլուծության շուրջ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել, որոնք անշուշտ մեծ հետաքրքրություն են ներկայացնում, սակայն մեր խնդրո առարկան այլ է: Շումերական էպիկական երգերում և հայկական ժողովրդական ավետիսներում հիշատակվող հազարամյակների ընթացքում գործող առևտրատնտեսական երթուղին նույնացնելով, ինչպես և մի շարք զուգահեռներ անցկացնելով՝ բացահայտել այդ հնագույն գրույցների միջև եղած կապը:

Հայերենում պարզագույն «ար» արմատի կրկնությամբ առաջացած «արար», «արարիչ» բառերի նույնիմաստ նշանակությամբ են «անել, գործել, կատարել, ստեղծել, վերլուծել, շինել, շինվածք, երկրագործություն, արարել, առնել, բերք, արդիւնք, կառուցել, գույք, ինչք, կալված, շինած բան, գործ, ստեղծուած էակ» բառերը¹⁰¹:

Ուշագրավ է, որ Աստվածաշնչի Սեպտուագինտայի թարգմանության մեջ Երեմիայի մարգարեության գրքում Արարատի թագավորությունը հիշատակված է Արատտա անունով¹⁰²:

Աստվածաշնչի մերօրյա հրատարակություններում Արարատը (**սուրբ**

կան քար» (տե՛ս **Ферсман А.** Очерки по истории камня. Москва, 1954, том 1, стр. 270):

⁹⁷ “Энмеркар и верховный жрец Аратты”. Транскрипции, перевод, комментарий и ввводные статьи И. Каневой // “Вестник древней истории” (далее ВДИ), Москва, 1964, N 4, стр. 208-219.

⁹⁸ Շումերերենից թարգմ.՝ Վ. Աֆանասևայի (տե՛ս **Афанасьева В.** Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве. Москва, 1979, гл. VII-VIII, стр. 110):

⁹⁹ **Մովսիսյան Ա.**, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, 1992, էջ 30:

¹⁰⁰ **Гамкрелидзе Т., Иванов В.** Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, часть 2, стр. 1325.

¹⁰¹ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, Երևան, 1971, հ. 1, էջ 261-262:

¹⁰² **Հ.Վահան վրդ. Ինգլիզեան**, Հայաստանը Սուրբ Գրքի Մէջ, Վիեննա, 1947, էջ7-8:

հող¹⁰³) հիշատակվում է երկու անգամ՝ Ջրհեղեղից հետո Նոյյան տապանի հանգրվանումը Արարատ լեռան վրա [Ծննդոց, VIII, 4] և Ասորեստանի արքա Սենեքերիմի [գահակալել է մ.թ.ա. 705-680] սպանության հետ կապված. «Եվ երբ երկրպագում էր [Սենեքերիմը] իր աստծո՝ Նեսրոքի տանը, նրա որդիները՝ Ադրամելեքն ու Սարասարը, նրան սրով սպանեցին, իսկ իրենք փախան Արարատի երկիրը» [Թագ. IV, XIX:37 և Եսայու մարգ. XXXVII:38]: Մ.թ.ա. VII դ. տեղի ունեցած այս պատմական իրադարձությունը¹⁰⁴ դրոշմվել է Ժողովրդի հիշողության մեջ, վերածվել բանավոր ավանդույթի և հետագայում ընդգրկվել «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղ՝ «Սանասար և Բաղդասար»:

«Էնմերբարը և Էնսուխքեշդաննան» վիպերգում հստակ հիշատակվում է երկու երկրների միջև ջրային ճանապարհը՝ Եփրատը.

От морей¹⁰⁵ и до гор кедровых
К востоку до гор благовонных кедров
Я их склоню сложить выи (шеи)
В Урук пусть ладьи с добром они тянут,
Пусть ладьи к Эзагину¹⁰⁶ Аратты привяжут
...
На берегу реки Ефрата
Реки богов, потока могучего...¹⁰⁷

Ուրուկով հոսել է միայն Եփրատը, ուստի և Արատտան գտնվել է Եփրատի ավազանում: Հայկական լեռնաշխարհից դեպի հարավ՝ Եփրատով Միջագետք ապրանքներ փոխադրելու մասին հավաստի տեղեկություններ պահպանվել են անտիկ հեղինակներ Դիոդորոս Սիկիլացու (մ.թ.ա. I)¹⁰⁸ և Հերոդոտոսի¹⁰⁹ (մ.թ.ա. IV) երկերում:

¹⁰³ Տե՛ս Библейская энциклопедия, трудъ и издание Архимандрита Никифора, Москва, 1990 (ретрит. изд. 1891), стр. 57-58.

¹⁰⁴ Տե՛ս **Красова А.** Синаххериб и страна юго-востока Малой Азии // ВДИ, 2010, N 1, стр. 98-114:

¹⁰⁵ Շումերների պատկերացումներում ծովը Պարսից ծոցն էր:

¹⁰⁶ Էզագին [E-za-gin]՝ «լաջվարդի տուն»:

¹⁰⁷ **Афанасьева В.** От начала начал // “Антология шумерской поэзии”, Москва, 1997, раздел IV, стр. 171-180.

¹⁰⁸ «Սեմիրամիսը (Շամիրամ) Հայկական լեռներից մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ (≈ 40 մ), իսկ լայնքը և հաստությունը քսան եւ հինգ (7,5 մ): Նա ջորիների և եզների բազմաթիւ լծերով (այդ քարը) իջեցրեց դեպի գետը եւ այնտեղից բարձեց լաստի վրա եւ դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այդ ձևի պատճառով անվանում են կոթող, որը եւ համարում են այսպես կոչված յոթ հրաշալիքներից մեկը» (տե՛ս **Դիոդորոս Սիկիլացի**, Պատմական գրադարան, առաջաբանը, ծանոթագր. եւ թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 27):

¹⁰⁹ Պատմահայրը գրում է. «Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերել,

Ժողովրդական ավետիսներում մինչև Եփրատ հասնելը խնկի ծառը պետք է անցկացնեն Մեծ և Փոքր Մասիսներով.

«Ասիս – Մասիս սար անցուցին...»

կամ՝

«Արս¹¹⁰, Մասս¹¹¹ սարն ընցուցին...»

Մերօրյա հայերենում Մասիս և Արարատ անվանումները հավասարապես օգտագործվում են, մինչդեռ անցյալում բնիկների միջավայրում ավելի տարածված էր Մասիս (հոգնակի՝ Մասիք) ձևը, իսկ եվրոպական լեզուներում՝ Արարատ անունը: Խորենացին **Մասիս** անվանումը կապում է Հայկ Նահապետի ծոռ Ամասիա թագավորի անվան հետ, որը լեռն անվանել էր իր անունով¹¹⁰: Որոշ ուսումնասիրողների կարծիքով «Մասիս» ձևը հին պարսկերենից է փոխառնված [masist՝ մեծ սար]¹¹¹: Շիրակացու «Աշխարհացույցի» (VII դ.) համաձայն՝ Վերին Հայոց Միջագետքի՝ ներկայիս **Մարդին** լեռները հիշատակված են **Մասիուս** և **Մասիոն** անուններով¹¹²: Շումերական էպոսի համաձայն՝ անմահների երկիրը **Մաշու** [Մասու] սարերի հետևում էր: Մաշու լեռան երկու գագաթները վիթխարի դարպասների նման պահպանում էին արևի ելքն ու մուտքը (արևածագն ու մայրամուտը)¹¹³.

Он [Гильгамеш] слышал о горах,
чьё имя – Машу,
Как только к этим двуглавым
горам подошел он,
Что восход и закат Уту стерегут
ежедневно,
Наверху берега Небес достигают,
Внизу – преисподней их грудь

Գիլգամեշը լսել էր լեռների մասին,
որոնց անունն է Մա՛շու,
Հենց որ այդ լեռներին նա մոտեցավ,
Որ արշալույսն ու մայրամուտն են
ամեն օր
պահպանում,
Վերևում հասնում են երկնային
ծովվածքին,

նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն: Արմենները ուռենու ճյուղերից պատրաստում են մեծ և փոքր նավեր՝ ամբողջովին կլոր և կաշվով պատած: Ամենամեծ նավերն ունեն շուրջ 5000 տաղանդ (≈150 տոննա) տարողություն: Բաբելոն հասնելուց և բեռը վաճառելուց հետո նրանք վաճառքի են հանում նավերի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են հեծկան անասունների վրա և վերադառնում արմենների երկիր, քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով» (տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյան, Երևան, 1986, էջ 553-578):

¹¹⁰ **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, գլ. ԺԲ:

¹¹¹ **Новосельцев А.** О местонахождении библейской горы Арарат. Москва, 1978, стр. 61-66.

¹¹² **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» (փորձ VII դ. հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրման հիմքի վրա), Երևան, 1963, էջ 65:

¹¹³ Էպոսի համաձայն՝ այնտեղ էր բնակվում Մեծ ջրհեղեղից միակ փրկվածը՝ Ութ-նապիշտիմը [շումեր.՝ Զիուսուդրան], որին աստվածները պարգևել էին անմահություն: Դժվար չէ զուգահեռներ տեսնել աստվածաշնչյան Նոյի հետ, որը նույնպես միակ փրկվածն էր:

достигает...¹¹⁴

Ներքևում՝ նրանց կուրծքը
սանդարամետին է
հասնում...¹¹⁵

Համադրե՞լ Մաշու լեռները Մեծ և Փոքր Մասիսների հետ¹¹⁶, թե՞ նույնացնել այն Արևմտյան Տիգրիսի աջ կողմում՝ Հայոց Միջագետքի Մասիուս և Մասիոն [այժմ՝ Մարդինի]¹¹⁷ լեռների հետ՝ այսօր ճշգրիտ որոշելը դժվար է, սակայն ինչու մենք հաստատապես համոզված ենք, դա այն բացառիկ դերն ու նշանակությունն է, որ ունեցել է Հայոց աշխարհը հին ժողովուրդների պատմության մեջ: Շումերների էպիկական զրույցներում հիշատակվում են ջրային և ցամաքային ճանապարհները, որոնք կապում են Հայոց աշխարհը Միջագետքի հետ՝ Արատտայից Շումեր Եփրատով, իսկ Շումերից Արատտա՝ ցամաքով: Այդ հազարամյա երթուղին նկարագրված է նաև մեր ժողովրդական ավետիսներում:

Միջագետքի գրականության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում **անմահության և հավերժական կյանքի** գաղափարը. Խումբաբային հաղթելու և մայրիները «նվաճելու» Գիլգամեշի հիմնական նպատակը իր անունն անմահացնելն էր.

«Մայրիների անտառում ուզում եմ հաղթել ես նրան,
Որքան զորեղ եմ ես՝ ծնունդն Ուրուկի, թող աշխարհը լսի
Կբարձրացնեմ ես ձեռքս, մայրիները կկտրեմ,
Հավիտենական անուն ես ինձ կստեղծեմ»¹¹⁸:

Հավիտենական կյանքի գաղափարը ժառանգել են հետագա կրոնական ուսմունքները, դիցուք՝ քրիստոնեությունը: Հին շումերների, արքա-դա-բաբելացիների էպիկական զրույցներն ու ավանդապատումները հետագայում եբրայեցիներն ընդգրկեցին Հին Կտակարան: Հազարավոր տարիների պատմություն ունեցող այդ սրբազան տեքստերը բանավոր ավանդությամբ, սերնդեսերունդ փոխանցվելով, կարողացան պահպանվել: Այդպիսի պահպանված մի պատահիկ է նաև **Ավետիսը**. բարի լուր ավետող այդ երգերը ժողովրդական երգարվեստում հստակ դիրք ունեն՝ պայմանավորված այդ ժանրի առանձնահատկությամբ: Մենք համոզված ենք, որ շումերական տեքստերն իրենց նախնական նշանակությամբ խիստ կարևորվել են, այլապես քրիստոնյաները դրանք չէին ընդգրկի իրենց ամենանվիրյալ տոնը խորհրդանշող՝ Հիսուսի Ծնունդն ավետող երգերում:

Երբ 1872 թ. անվանի ասորագետ Ջորջ Սմիթն առաջին անգամ զեկուցեց նախաաստվածաշնչյան Նոյի՝ Ութնապիշտիմի [Զիուսուդրա] և Մեծ

¹¹⁴ Эпос о Гильгамеше. “О все видавшем”, тб. IX.

¹¹⁵ Հայերեն թարգմ. տե՛ս Հին Արևելքի պոեզիա, էջ 143:

¹¹⁶ Վարպետեան Ա., Ովքե՞ր են ի վերջոյ արիացիները, Երևան, 1990, էջ 101-131:

¹¹⁷ Քասունի Եր., Նախահայկական Հայաստան (Հայաստանի քննական պատմությունը նորքարային շրջանէն 600 ն. ք.), Պեյրուք, 1950, էջ 31:

¹¹⁸ Афанасьева В. От начала начал // “Антология шумерской поэзии”, Санкт-Петербург, 1997, стр. 207, հայերեն թարգմ.՝ Հին Արևելքի պոեզիա, էջ 114:

ջրհեղեղի խալդեական տեքստի թարգմանության արդյունքների մասին՝ ապացուցելով, որ այդ «գրույցը» շատ ավելի հին է, քան Աստվածաշնչում հիշատակվող պատմությունը, գիտական աշխարհը ցնցում ապրեց¹¹⁹։ Շումերերեն և աքքադերեն սեպագիր տեքստերի հետագա վերծանությունները ստիպեցին վերանայել համաշխարհային պատմությունը քանի որ բացահայտվեցին Աստվածաշնչում հիշատակվող մի շարք ավանդազրույցների առավել հին տարբերակները, օրինակ՝ դրախտային երկիր Դիլմունի արարման¹²⁰, արգելված պտղի համտեսման¹²¹, առաջին կին Լիլիթի¹²² մասին ավանդապատումները։

Արդի գիտության համար գաղտնիք չէ, որ եբրայեցիները, իսկ հետագայում քրիստոնյաները փոխառել են Արևելքի հնագույն ժողովուրդների պատմամշակութային արժեքները, և այդ տեսակետից ժողովրդական Ավետիսներում հին շումերական էպոսից պահպանված հատվածը միանգամայն բացատրելի է։ Սակայն մեր համեմատական ուսումնասիրություններն ու մանրակրկիտ վերլուծական աշխատանքներն ապացույց են այն բանի, որ շումերական էպիկական ավանդազրույցները ոչ թե փոխառնման սկզբունքով են թափանցել հայկական ժողովրդական ավետիսների մեջ և հետագայում «վերածվել» Քրիստոսի Ծննդյան երգերի, այլ այդ զրույցներն ի սկզբանե **էնդեմիկ՝ տեղական** ծագում են ունեցել և մինչև քրիստոնեության ընդունումը ժողովրդական բանավոր գրականության մեջ արդեն իսկ ճանաչված և սիրված են եղել։ Ինչպես հայտնի է, վիպական զրույցների հիմքում երբեմնի տեղի ունեցած պատմական իրադարձություններ են, հեռավոր անցյալի եղելություն, որտեղ իրական դեպքերը միահյուսվում են հորինվածքների հետ, իսկ պատմական անձինք գերբնական էակների ուժ ստանում։ Պատմական խոշոր իրադարձությունները, որպես կանոն, ցնցում են առաջացնում, որն էլ «նստվածք է» թողնում բանավոր արվեստում։ Ցանկացած ժողովրդի էպիկական զրույցներում ի՞ր սեփական պատմությունն է, հարազատ հողի վրա տեղի ունեցած իրադարձությունները։ Այդպես, օրինակ, Առաջավոր Ասիայի հետագա պատմության համար Տրոյական պատերազմը (մ.թ.ա. XII դ.), որն ըստ էության Արևմուտքի և Արևելքի առաջին բախումն էր, անդառնալի հետևանքներ ունեցավ և անջնջելի հետք թողեց հելլենների պատմամշակութային համակարգում, մինչդեռ հայ ժողովրդի բանավոր ավանդության մեջ այդ խոշոր պատմական իրադարձությունն արձագանք չունեցավ, չնայած այն իրողությանը, որ հայոց կողմից Տրոյական զորքին և Պրիամոս արքային օգնության զորախումբ էր մեկնել Զարմայր Հայկազունու առաջնորդությամբ, որն էլ «հելլենաց քաջերից վիրավորվելով՝ մահացել էր»¹²³։ Պատմության մեջ

¹¹⁹ Smith G. Chaldean Account of Genesis. London, 1876.

¹²⁰ Библии Дж. [Geoffrey Bibby]. В поисках "Дильмуна". Пер. с англ. Н. Елисеева, примеч. В. Гуляева. Москва, 1984.

¹²¹ Ст'ю Крамер С. Мифология древнего мира. Пер. В. Якобсона, Москва, 1977, стр. 128:

¹²² Крамер С. История начинается в Шумере. Пер. с англ. Ф. Мендельсона, под ред. академика В. Струве. Москва, 1965, стр. 52.

¹²³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք 1, գլ. ԺԺ:

նման «լուրջությունը» կարելի է բացատրել նաև պարտված կողմի հոգեբանությամբ, սակայն ուսումնասիրություններն ու փաստերը մեզ այլ բան են հուշում: Էպիկական պատմվածքները հարյուրավոր տարիներ կարող են ապրել ժողովրդի հիշողության մեջ, քանզի այն տվյալ ժողովրդի պատմությունն է: Դրա ապացույցն են V դ. Գողթան երգիչներից Մովսես Խորենացու գրառած առասպելները՝ «Հայկ և Բել» (մ.թ.ա. II հազ.)¹²⁴, «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (մ.թ.ա. IX դ.)¹²⁵, «Արտաշես և Սաթենիկ» (մ.թ.ա. III-II դ.)¹²⁶ ևն: Այս կամ այն չափով փոփոխության ենթարկվելով՝ վիպական զրույցը, միևնույնն է, պահպանում է նախնական կորիզը:

Դժվար է պատկերացնել, որ որևէ ժողովուրդ իր տոնածիսական երգերում դարեր շարունակ սրբորեն պահպանի այլ ազգի՝ թեկուզ և հարևան, բայց այնուամենայնիվ օտար ազգի մշակութային արժեք ներկայացնող էպիկական զրույցներն ու կրոնական հավատալիքները: Մեր խորին համոզմամբ ավետիսների բանաստեղծական տեքստի **հնագույն մասը** հայ ժողովուրդը **ոչ թե ժառանգել է** Հին Արևելքում տարածված էպիկական զրույցներից, այլ դարեր շարունակ պահպանել է **իր հարազատ**՝ հայոց հողի հետ կապված և **ավանդապատում դարձած իրադարձությունները**: Այսպիսով, տասնյակ դարերի ընթացքում պատմությունն ու առասպելը շերտավորվելով վերածվել են կրոնածիսական պաշտամունքի, որն էլ ամփոփվել է ժողովրդական **Ավետիսներում**:

Աղյուսակ I

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԵՂՋԿԱԿԱՆԻ ՄԵՋ ԹԱՓԱՆՑԱԾ ՄԵՂԵԴԻՆԵՐՈՎ «ԾՆՆԴՅԱՆ ԵՐԳԵՐ»

N	Երգի անվանումը	Գրական աղբյուրը	Հրատարակ.	Երգի ծննդավայրը	Երգասացի մասին տվյալներ
1.	Արդ ցնծացեք	Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 20	Երևան, 2000	Ռշտունիք (Վասպուրական), գ. Պողոնիս	Գևորգ վարդապետի եղբայր Հարություն
2.	Արդ ցնծացեք	Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 21	Երևան, 2000		
3.	Արդ ցնծացեք	Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 22	Երևան, 2000		
4.	Այսօր տոն է Սուրբ Ծննդյան	Մ. Թումանյան, ՀԵՈԲ, հ. 1, N 17, էջ 63	Երևան, 1972	Բուֆանիա, գ. Պարտիզակ	Մարիամ Մինասյան
5.	Այսօր տոն է Սուրբ	Մ. Թումանյան, ՀԵՈԲ, հ. 1, N 18,	Երևան, 1972	Բուֆանիա, գ. Պարտիզակ	Սողոմե Փաթինյան

¹²⁴ Ըստ Միքայել Չամչյանի՝ Հայկ Նահապետի մենամարտն ընդդեմ Բելի (Հայոց Ձորի ճակատամարտը) տեղի է ունեցել մ.թ.ա. 2492-ի հայոց սրբազան տոմարի նավասարդ ամսին՝ օգոստոսի 11-ին: Մահացել է Հայկը մ.թ.ա. 2026-ին (տե՛ս **Չամչյան Մ.**, Պատմություն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, Վենետիկ – ս. Ղազար, 1874, հ. Ա, էջ 61-65):

¹²⁵ Տե՛ս **Арутюнян С.** Мифы народов мира. Москва, 1988, том 2, стр. 639:

¹²⁶ **Աբեղյան Մ.**, Երկեր, Երևան, 1966, հ. Ա, էջ 115-117, 170-174:

	Ծննդյան	էջ 63-64			
6.	Էսոր տոն է Սուրբ Ծննդյան	Մ. Թումաճան, ՀեուՐ, հ. 2, N 59, էջ 96	Երևան, 1983	Կեսարիա	Ֆիլոր Ղազարիկյան
7.	Էսոր տոն է Սուրբ Ծննդյան	Մ. Թումաճան, ՀեուՐ, հ. 2, N 60, էջ 96	Երևան, 1983	Կեսարիա	Դանիել Փասլոտյան
8.	Էսոր տոն է Սուրբ Ծննդյան	Մ. Թումաճան, ՀեուՐ, հ. 2, N 61, էջ 97	Երևան, 1983	Կեսարիա	Մարգարիտ Իսքենտերյան
9.	Այսոր տոն է հայտնության	Մ. Թումաճան, ՀեուՐ, հ. 3, N 7, էջ 13	Երևան, 1986	Բալու, գ. Արղթան	Հովհաննես Նիկողոսյան
10.	Ավետիք	Մարտունու շրջանի ժող. երգեր, կազմ.՝ Մ. Մանուկյան, N 10, էջ 35	Երևան, 1997	գ. Ծովինար	Ազիզ Խաչատուրի Դավթյան, ծնվ. 1902 թ.
11.	Ալելու	Մարտունու շրջանի ժող. երգեր, կազմ.՝ Մ. Մանուկյան, N 11, էջ 36-38	Երևան, 1997	Մարտունի	Պատվական Բեգլարի Նազարյան, ծնվ. 1896 թ.
12.	Ալելույա	Մարտունու շրջանի ժող. երգեր, կազմ.՝ Մ. Մանուկյան, N 12, էջ 39-41	Երևան, 1997	Մարտունի, գ. Աստղածոր	Հովհաննես Առաքելի Հակոբյան

Աղյուսակ II

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐՈՎ «ԱՎԵՏԻՍՆԵՐ»

N	Երգի անվանումը	Գրական աղբյուրը	Հրատարակ.	Երգի ծննդավայրը	Երգասացի մասին տվյալներ
1.	Մայրամ գնաց	Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 23, էջ 55	Երևան, 2000	Մոկք, գ. Գնեկանց	Նախո Աբրահամյան (Նախո Քեռի)
2.	Այսոր տոն է	Կոմիտաս, ԵԺ, հ. 10, N 24, էջ 55	Երևան, 2000		
3.	Մայրամ գնաց դուռն ի հերին	Կոմիտաս, ԵԺ, հ. 14, N 26, էջ 49	Երևան, 2006	Վան	--
4.	Մայրամ	Կոմիտաս, ԵԺ,	Երևան,		Տիգրան

	գնաց դուռը հ'էրին	հ. 14, N 41, էջ 54	2006	Վան, 1914 թ.	Չիթունի
5.	Մայրամ գնաց դուռը հ'էրին	Կոմիտաս, ԵԺ, հ. 14, N 42, էջ 55	Երևան, 2006	Վան, 1914 թ.	Տիգրան Չիթունի
6.	Ծառ մի կանաչեր	Մ. Թումանյան, ՀեուԲ, հ. 1, N 19, էջ 65	Երևան, 1972	Բուքանիա, գ. Պարտիզակ	Ազնիվ Պողոսյան
7.	Այսօր ծնունդ	Մ. Թումանյան, ՀեուԲ, հ. 4, N 5, էջ 22	Երևան, 2005	Իսլաթ	Անուշ Գրիգորյան
8.	Մայրամ գնաց դուռը լերին	Մ. Թումանյան, ՀեուԲ, հ. 4, N 131, էջ 154-156	Երևան, 2005	Վան	Տիգրան Չիթունի
9.	Մայրամ գնաց դուռը լերին	Մ. Թումանյան, ՀեուԲ, հ. 4, N 132, էջ 156	Երևան, 2005	Վան	Շուշանիկ Շահինյան
10.	Մայրամ գնաց դուռը լերին	Մ. Թումանյան, ՀեուԲ, հ. 4, N 133, էջ 157	Երևան, 2005	Վան	Լևոն Գազանճյան
11.	Ավետիք	«Թալին» հայ ժող. նվագներ և երգեր, N 1, էջ 62	Երևան, 1984	Մուշ	Ռեհան Գուլյան, ծնվ. 1890 թ.
12.	Ավետիք	«Թալին» հայ ժող. նվագներ և երգեր, N 2, էջ 62-63	Երևան, 1984	Սասուն	Վարդուշ Ղուկասյան
13.	Երգ ծննդյան	«Հայրենի երգեր», ժող- ծու, N 57, էջ 86	Երևան, 2007	Շատախ	Հայրիկ Մուրադյան
14.	Ավետիս	«Հայրենի երգեր», ժող- ծու, N 58, էջ 86	Երևան, 2007	Շատախ	Հայրիկ Մուրադյան
15.	Մեզ ավետիք (Շըմոն խեծե կապուտ քուռակ)	Սպ. Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պա- րեր, հ. 1, N116, էջ 97	Երևան, 1949	Ալաշկերտ	Վանուշ Ներսիսյան

СЛЕДЫ ШУМЕРСКОГО ЭПОСА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ РОЖДЕСТВЕНСКИХ “АВETISAX” (Благовестах)

МАРИАННА ТИГРАНЯН

Обрядовые песни являются наиболее древним пластом народного песнетворчества, посему они представляют большую ценность и становятся интересным материалом для исследования. К обрядовым песням относятся и “Аветисы” – Благовесты, колядные песни, или, как их еще называют – “Рождественские песни”.

По мелодическому строению Аветисы можно разделить на две группы:

- а) церковные мелодии, проникнувшие в народное песнетворчество;
- б) дохристианский народный мелос – фольклор.

Для нашего исследования особый интерес представляют средние – центральные разделы народных Аветисов, а именно – вырубка и доставка ладанного древа и возведение Священного храма, поскольку они и являются наиболее древним пластом и ведут к древним шумерам, к первым в истории человечества клинописным памятникам (III тысячелетие до н.э.), к эпосу о Гильгамеше и эпической поэме “Эн-Меркар и верховный жрец Аратты”.

Подробное изучение материала и проделанный нами скрупулёзный сравнительный анализ первоисточников, является доказательством того, что шумерские эпические предания, перевоплотившись в дальнейшем в Рождественские песни, проникли в армянские народные аветисы, не путем простого перенятия. Скорее наоборот, эти предания изначально имели **эндемическое**, свойственное определенной местности, территориальное происхождение; еще задолго до принятия христианства они были любимы и имели широкое распространение в устном народном творчестве.

Ключевые слова – Комитас, Рождественские песни (благовесты), народные аветисы (“Колядки”), ладанное древо, Древо жизни – кедр, города Урук и Урфа – Эдесса, река Ефрат, Арарат и Масис, Шумеры и Аратта, Армянское нагорье и Междуречье, Гильгамеш и Энкиду, правители Эн-Маркар и Энсукешданна, лазурит.

TRACES OF ANICENT SUMERIAN EPIC POETRY IN THE ARMENIAN AVETISES

MARIANNA TIGRANYAN

Ritual chants have a special place in the Armenian folk song music. Those chants include *avetises* more known as Christmas songs.

According to melodic structure *avetises* may be categorized in two groups:

- a) melodies that in Christian period have penetrated into peasant songs from religious music;
- b) folk chants, which have survived since pre-Christian times.

We, like Komitas in his time, were interested in the second group of *avetises*, in which we included those “*untouched peasant songs*”, connected with older – archaic – tradition of composition.

Of most interest for the present study were those middle or central parts of these songs, describing the emergence of incense tree and erection of the temple, and which comprise the older parts of *avetises*, and take us to Ancient Sumer to the first cuneiform texts [III millennium B.C.], to the epic poem of Gilgamesh, to “Enmerkar and the Lord of Aratta”.

The analysis has identified profound evidence, which points that some of Sumerian epic narratives found in the Armenian folk *avetises* may have been **endemic** to Armenian tradition and may have been well-known in the oral tradition of folk literature in pre-Christian period, rather than being borrowed and further ‘transformed’ into Christmas songs.

Key words – Komitas, Christmas songs, folk *avetises*, incense tree, cedar tree (the tree of life), Urfa - Edessa, Euphrates, Gilgamesh and Enkidu, Aratta and Sumer, Ararat and Masis, Armenia and Mesopotamia, rulers Enmerkar and Ensuhkeshdanna, lapis lazuli.